ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

# 2007թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԶԵԿՈՒՅՑ

ՎԱՆԱՁՈՐ 2007



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Բովանդակություն

1. Ներածություն---------------------------------------------------------------------------------------3

2. Նախընտրական քարոզչության դիտարկում--------------------------------------------5

3. Քվեարկության պրոցեսի և արդյունքների դիտարկում--------------------------------9

4. Եզրակացություն -----------------------------------------------------------------------------17

5. Հավելվածներ (փաստեր) -------------------------------------------------------------------19



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

# 1. Ներածություն

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները կայացել են 2007թ մայիսի 12-ին:

ՀՀ Ազգային ժողովն ընտրվում է խառը ընտրական համակարգով: Ազգային ժողովի պատգամավորներից 90-ը ընտրվում են համամասնական, իսկ 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով:

Համամասնական ընտրակարգի դեպքում ողջ Հայաստանի տարածքը կազմավորվում է որպես մեկ ընտրատարածք: Մեծամասնական կարգով ընտրությունների ժամանակ ամբողջ Հայաստանում ձևավորվում են 41 ընտրատարածքային ընտրական տեղամասեր:

ՀՀ ԸՕ 115 հոդվածի համաձայն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում նախատեսված մանդատները բաշխվում են այն կուսակցությունների շրջանում, ովքեր ստացել են վավեր քվեաթերթիկների առնվազն 5 տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքը՝ վավեր քվեաթերթիկների առնվազն 7 տոկոսը: Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է մյուս թեկնածուներից ավելի ձայն, թեկուզ մեկով: Եթե քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում մասնակիցների վավեր ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

Մեծամասնական կարգով պատգամավորության 41 տեղի համար առաջադրվել էր 119 թեկնածու:

Համամասնական ընտրակարգով՝ 23 կուսակցություն և մեկ դաշինք:

ՀՀ ԱԺ-ի նախորդ ընտրություններից հետո ՀՀ ԸՕ-ի 141 հոդվածներում տեղի են ունեցել շուրջ 328 փոփոխություններ:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունները միտված են եղել կանխել ընտրախախտումները, բացառել ընտրակեղծիքները: ՀՀ Վարչական և Քրեական օրենսգրքերով պատասխանատվություն է սահմանվել նաև ընտրակաշառք վերցնողների համար:

Քվեարկության գործընթացում խախտումները նվազագույնի հասցնելու համար պատրաստվել են հատուկ ծրարներ: Ընտրողն իր նախընտրած թեկնածուի օգտին նշում կատարելուց հետո քվեաթերթիկը տեղադրում է ծրարի մեջ, ապա գցում քվեատուփը:

Հատուկ ուշադրություն է դարձվել ընտրացուցակների կազմմանը: ՀՀ ԸՕ 9-րդ հոդվածի փոփոխությամբ ընտրողների ցուցակը կազմում և վարում է քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը /այսուհետ՝ լիազոր մարմին/:

Ի տարբերություն նախորդ՝ 2003թ-ի ընտրությունների, նկատելի էր երկու արմատական տարբերություն:

Նախ՝ Ընտրական օրենսգրքի փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող քաղաքացիներին արգելվեց մասնակցել քվեարկությանն արտասահմանում գտնվող հայկական դեսպանատներում և հյուպատոսարաններում տեղակայված ընտրատեղամասերում:

Երկրորդ՝ իրավապահ մարմիններն ուղղակիորեն չեն ներգրավվել ընտրական գործընթացներում թե՛ նախընտրական քարոզչության, թե՛ քվեարկության պրոցեսի ընթացքում:

Ոստիկանության վարքագիծը կարելի է բնութագրել որպես խիստ չեզոք: Բացառությամբ մի քանի դեպքերի, երբ ոստիկանության աշխատակիցը սեփական նախաձեռնությամբ քարոզչություն է իրականացրել իր ազգակից կամ նախընտրած մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուի օգտին:

ԱԺ ընտրությունների նախորդ տարում անհիմն ազատազրկման ենթարկվեց «Ժամանակ Երևան» թերթի խմբագիր Արման Բաբաջանյանը: Նրա նկատմամբ տարբերակված մոտեցում կիրառվեց: Արման Բաբաջանյանը զինվորական ծառայությունից խուսափելու համար քրեական



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

պատասխանատվությունից չազատվեց դրամական փոխհատուցմամբ, ինչպես սահմանվում էր օրենքով:

2006թ-ին Սահմանադրական կարգը բռնի փոփոխելու կոչեր անելու անհիմն մեղադրանքով ձերբակալվեցին նաև Վարդան Մալխասյանը և Ժիրայր Սեֆիլյանը: Վերջիններիս ելույթներն ուղղակի կապ ունեին եկող ընտրությունների հետ, ինչը հիմք է տալիս նրանց ձերբալակումները որակել որպես քաղաքական ենթատեքստ ունեցող:

Վարդան Մալխասյանն առաջադրվեց մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու, սակայն որպես խափանման միջոց կիրառված կալանքը նրան զրկեց սահմանված կարգով նախընտրական քարոզչություն իրականացնելու հնարավորությունից: Առկա իրավիճակն ակնհայտ խտրական մոտեցում էր, ինչն այդպես էլ չարժանացավ ոչ համապատասխան մարմինների/ այդ թվում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը/ ոչ դիտորդական առաքելություն իրականացնող ԱՊՀ և եվրոպական կառույցների ուշադրությանը, թեև նրանց դիտորդական առաքելությունն ընդգրկում էր նաև նախընտրական քարոզչության ժամանակահատվածը)

2007թ. մարտ ամսին «Քաղաքացիական նախաձեռնություն» շարժման ղեկավար Ալեքսանդր Արզումանյանը ձերբակալվեց` «ապօրինի փողերի լվացման» անհիմն մեղադրանքով և նրա նկամամբ ևս խափանման միջոց կիրառվեց կալանքը:

Նախընտրական քարոզչության ընթացքում «Գոլոս Արմենի» թերթում տպագրվեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աշխատակցի գաղտնալսված խոսակցության մանրամասները:

Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրապարակավ անդրադարձավ գաղտնալսված խոսակցությանը` գնահատելով կուսակցության նախագահի պահվածքը որպես դավաճանություն: Միևնույն ժամանակ որևէ կերպ անդրադարձ չեղավ գաղտնալսման անօրինականությանը, և մինչ այժմ պարզված չէ` որ ծառայության կամ ում կողմից է իրականացվել ապօրինի գաղտնալսումը:

Մայիսի 9-ին «Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ» և «Հանրապետություն» կուսակցությունների համատեղ հանրահավաքից հետո կազմակերպված խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ ոստիկանական ուժերի կողմից կիրառվեցին ուժ և արցունքաբեր գազեր: Մինչ այժմ որևէ հետաքննություն չի իրականացվել, պարզելու համար արդյոք համարժեք էր ոստիկանության կողմից ուժի կիրառումը ցույցի մասնակիցների դրսևորված վարագծին նկատմամբ: (իրավական տեսանկյունից նման միջոցների ձեռնարկումը կարող է թույլատրելի համարվել կատարվող գործողության և նախականխիչ միջոցառումների համարժեքության տեսանկյունից)

2007թ ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում մի շարք կրոնական կազմակերպություններ առաջին անգամ հանդես եկան կոչով` ընտրախախտումները կանխելու նպատակով:

2007թ ՀՀ ԱԺ-ի ընտրությունների կազմակերպման և կայացման վրա նշանակալից ազդեցություն ունեցան Եվրամիության և Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի հայտարարությունները:

Դեռևս մարտին Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբին հայտարարեց, որ իրենց ուշադրությունը պիտի կենտրոնացած լինի առաջիկա ընտրությունների վրա` միաժամանակ նշելով, որ ընտրությունների պատշաճ անցկացումով Հայաստանը համապատասխան ուղերձ կհղի Եվրամիությանը` երկկողմ հարաբերությունների խորացման առումով: Հայաստանը պարտավորվում էր իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ:

2007թ. մայիսի 12-ին կայանալիք ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով ՀՀ ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվեցին 6 միջազգային և 53 տեղական կազմակերպություններ:

Դիտորդների դիտարկման ծավալը ողջ ընտրական պրոցեսն է` ներառյալ ընտրական օրենսդրությունը, նախընտրական քարոզչությունը, քվեարկությունը, քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփումը, ընտրական վեճերի քննարկումը դատարաններում:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

2007թ մայիսի 12-ի ՀՀ Ազգային Ժողովի ընտրությունների դիտարկումը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն իրականացրել է Լոռու և Տավուշի մարզերում, ինչպես նաև նախընտրական քարոզչության ընթացքը` Վայք, Սիսիան և Գյումրի քաղաքներում:

Կազմակերպության կողմից ընտրությունների դիտարկումն ընդգրկում էր.

- նախընտրական քարոզչության և քվեարկության ընթացքում ՀՀ ԸՕ-ով սահմանված իրավական նորմերի կատարումը,
- դիտարկման արդունքների հիման վրա միջանկյալ զեկույցների պատրաստումը,
- բացահայտված խախտումների վերացմանն ուղղված գործողությունների իրականացումը:

Զեկույցում ներառված տեղեկությունները կազմակերպությունը ստացել է ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական աղբյուրներից: Պաշտոնական տեղեկությունները հարցումների և դրանց պատասխանների միջոցով ստացվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ընտրական հանձնաժողովներից:

Ոչ պաշտոնական տեղեկությունները ստացվել են դիտորդների կողմից ընտրական օրենսդրության խախտումների վերաբերյալ համապատասխան արձանագրությունների, ընտրողների և թեկնածուների հետ անձնական զրույցների և հարցազրույցների, քաղաքացիների բողոք-դիմումների և հեռախոսազանգերի միջոցով, ինչպես նաև ԶԼՄ-ում հրապարակումների հիման վրա:

Զեկույցը չի անդրադարձել անանուն հայտարարություններին և չճշտված տեղեկություններին:

Կազմակերպությունը որպես դիտորդ ներգրավվել է կազմակերպության անդամներին, աշխատակիցներին, համակիրներին և շահառուներին:

Կազմակերպության կողմից դիտորդների համար Վանաձորում կազմակերպվել է սեմինար: Սեմինարի ընթացքում կազմակերպության ղեկավարն ու իրավաբանը դիտորդներին ներկայացրել են նրանց իրավունքներն ու պարտականությունները, դիտորդի վարքագիծը քվեարկության օրը: Յուրաքանչյուր դիտորդի կազմակերպությունը տրամադրել է մեկական Ընտրական օրենսգիրք, դիտարկման համար պատրաստված հատուկ գործիքներ:

## 2. Նախընտրական քարոզչության դիտարկում

Կազմակերպության կողմից նախընտրական քարոզչության ընթացքը դիտարկվել է Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի քաղաքներում, Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Բերդ քաղաքներում, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, Վայոց Ձորի Վայք քաղաքում, Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում:

Զեկույցում ներկայացված են նաև Լոռու մարզի հինգ քաղաքներում /Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ, Տաշիր և Ստեփանավան/ տեղական լրատվամիջոցներով ընտրական քարոզչության մոնիտորինգի արդյունքները:

Դիտարկումն ուղղված է եղել ՀՀ ԸՕ-ով, ԿԸՀ-ի որոշումներով սահմանված նախընտրական քարոզչության հետևյալ սկզբունքների պահպանման վիճակի ուսումնասիրմանը.

- թեկնածուների կողմից նախընտրական հանդիպումների իրականացում,
- թեկնածուների համար հավասար հնարավորությունների ապահովում,
- նախընտրական քարոզչության նյութերի տարածում,
- նախընտրական կաշառքների, խոստումների, ծառայությունների իրականացում:

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն` 2007թ ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչությունը



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

մեկնարկել է 2007թ ապրիլի 8-ից:

Լոռու մարզի տարածքում ծավալված էին թիվ 29, 30, 31, 32 ընտրատարածքները,
Շիրակի մարզում՝ թիվ 33, 34, 35, 36 ընտրատարածքները,
Տավուշի մարզում՝ թիվ 40, 41 ընտրատարածքները:

Լոռու մարզում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության համար առաջադրվել է 12 թեկնածու, Շիրակի մարզում՝ 13 թեկնածու, Տավուշի մարզում՝ 7 թեկնածու:

Նախընտրական քարոզչության ընթացքի դիտարկումները վկայում են, որ առավել ակտիվ նախընտրական քարոզչություն իրականացրել են Հայաստանի հանրապետական կուսակցության /ՀՀԿ/ կողմից առաջադրված կամ այդ կուսակցության կողմից հովանավորվող թեկնածուները:

Վարչական ռեսուրսներն օգտագործվել են ՀՀԿ և նրա կողմից առաջադրված թեկնածուների օգտին, որը հանգեցրել է նախընտրական քարոզչության բոլոր սկզբունքների կոպիտ խախտմանը /ԸՕ հոդված 18/:

Նախընտրական քարոզչության ընթացքում տեղի ունեցած խախտումներն ուղղակի ազդեցություն են ունեցել քվեարկության ընթացքի և ընտրությունների արդյունքների վրա /տես հավելված 3/:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների կողմից նախընտրական քարոզչությունն իրականացվել է քաղաքացիների հետ հանդիպումների, հեռուստատեսությամբ ելույթների, տպագիր քարոզչական նյութերի տարածման միջոցով:

Համամասնական ընտրակարգով առաջադրված կուսակցությունների կողմից այս միջոցառումներին ավելացել է նաև տարբեր մարզերում հանրապետությունում հեղինակություն վայելող տարբեր արվեստագետների մասնակցությամբ համերգների կազմակերպումը: (Երևույթը որակվում է որպես խիստ անընդունելի, քանզի պետության ներկա վիճակում արվեստագետների հանդեպ կիրառվող նյութական շահագրգռիչ միջոցներով օգտագործում են նրանց համբավը սեփական ստոր նպատակների իրագործման համար)

Լոռու մարզում նախընտրական քարոզչության ընթացքի ընտրախախտումներն ակտիվ լուսաբանել է Լոռու մարզում «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Կարինե Սիմոնյանը:

2007թ մայիսի 10-ին՝ առավոտյան, Լոռու մարզի Սանահին գյուղում անհայտ անձը ապակին կոտրելու միջոցով մուտք է գործել Կ. Սիմոնյանի բնակարան և տակնուվրա արել բնակարանի իրերը:

## Նախընտրական հանդիպումներ և քարոզչական նյութերի տարածում

ՀՀ ԸՕ-ի /հոդված 21/ համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի տարածքում ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության սկզբից 5 օր հետո առանձնացնում է հատուկ տեղեր քարոզչական պաստառներ փակցնելու համար:

Ալավերդի և Սպիտակ քաղաքներում ընդդիմադիր կուսակցությունների հաղորդած տվյալներով՝ նախընտրական քարոզչության պաստառների փակցման համար նշված համայնքների ղեկավարների կողմից համապատասխան որոշումներով սահմանվել է սակագին՝ 1քմ մակերեսի համար 1500 դրամ:

Ազգային Միաբանություն կուսակցության պաստառները հաճախ պատռվել են փակցված տեղերից, որի կապակցությամբ կուսակցության տարածքային կազմակերպության նախագահը դիմել է Ալավերդու ոստիկանության բաժնի պետին: Ազգային Միաբանություն կուսակցությանը ոստիկանությունը հայտնել է, որ համապատասխան թվով մարդկային ռեսուրսներ չունեն, պաստառները պաշտպանելու համար: Մինչդեռ որևէ կուսակցություն երբևէ պարտավորություն չի ստանձնել հատուկ ռեսուրս պահել քարոզչական պաստառների պահպանման համար: Դա հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմինների և ոստիկանության աշխատակիցների իրավազորության շրջանակներում կատարման ենթական գործողություն, ինչի կապակցությամբ նրանց կողմից դրսևորվել է անգործություն, քանզի նրանք բոլորը պատկանում են միևնույն կուսակցական կլանին, որն էլ օժանդակում և պարտակում է



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

նրանց անգործությունը:

2005թ օգոստոսին ընդունված ՀՀ ԿԸՀ-ի թիվ 38-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն` նախընտրական հանդիպումներ իրականացնելու համար թեկնածուն դիմում է համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովին` նշելով հանդիպման օրը, տեղը, ժամը: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանում է նախընտրական հանդիպումների ժամանակացույցը` պահպանելով բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ:

Մեծամասնական և համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների նախընտրական հանդիպումներն ընթացել են արգելքներով, խոչընդոտներով և թեկնածուի ու նրա համակիրների նկատմամբ ճնշումներով:

***Թիվ 30*** ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանին արգելվել է պետության աջակցության ներքո գտնվող հիմնարկներում` դպրոցներում նախընտրական հանդիպումներ անցկացնել: Դպրոցի տնօրենները բացատրել են, որ դպրոցի աշխատակիցները չեն ցանկանում հանդիպել նրա հետ:

Մայիսի 1-3-ը պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանի նախընտրական հանդիպումների ժամանակ, որոնց ներկա են եղել նաև ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատությունների երկարաժամկետ դիտորդները, ալկոհոլ օգտագործած կանայք և տղամարդիկ դիտավորյալ, անձնական վիրավորանքների և գոռգոռոցների միջոցով խոչընդոտել են նրա հանդիպմանը:

Դիտորդների վկայությամբ` դա իրականացրել են պատգամավորության մյուս թեկնածու Վահրամ Բաղդասարյանի աջակիցները:

Միևնույն ժամանակ, պատգամավորության թեկնածու Վահրամ Բաղդասարյանը, որը վայելում էր ՀՀԿ աջակցությունը, նախընտրական ակտիվ հանդիպումներ է իրականացրել դպրոցներում: Նրա օգտին քարոզչությամբ հանդես են եկել այդ դպրոցների տնօրենները: Աշակերտների ծնողերին տնօրենները, ուսուցիչները դպրոց են հրավիրել ծնողական ժողովի պատրվակով և արդյունքում իրենց կամքից անկախ դարձել պատգամավորության թեկնածու Վահրամ Բաղդասարյանի նախընտրական հանդիպումների մասնակից հանդիպումներին:

***Թիվ 31*** ընտրատարածքում մայիսի 1-ին սպառնացել են մեծամասնական կարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Լարիսա Փարեմուզյանին: Գուգարք գյուղում կայացած նախընտրական հանդիպումից հետո նրան հայտնել են, որ նա վատ բաներ է ասում իրենց «ախպերության» հաշվին և պահանջել են թողնել Գուգարք գյուղը:

Տավուշի մարզկենտրոնում` Իջևան համայնքում, /***Թիվ 41*** ընտրատարածք/ «Իմպիչմենտ» դաշինքի նախընտրական շտաբի տեղեկատվությամբ` սպառնալիքների և ճնշումների ազդեցությունն այնքան մեծ է եղել, որ նախընտրական քարոզչությունն իրականացվել է տնային այցելություններով:

Դպրոցներում և համալսարաններում նախընտրական հանդիպումներն արգելված են եղել ընդդիմադիր կուսակցությունների համար:

Բերդ քաղաքում /Տավուշի մարզ/ ՀՀԿ շտաբի պետ Սամվել Առաքելյանը եղել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի տնօրենը:

Սիսիանում /Սյունիքի մարզ/ ՀՅԴ շտաբի պետ Վլադիկ Հակոբյանի հաղորդմամբ` կուսակցությունը քաղաքում ունեցել է ընդամենը մեկ շտաբ, և նախընտրական քարոզչությունն իրականացրել մոբիլ խմբերով:

## Քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործություն

ՀՀ ԸՕ-ով 22 հոդվածը սահմանում է քաղաքացիների կամքի ազատ արտահատման վրա ներգործության արգելումը:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

2007թ տարեսկզբից Վանաձորի հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, պետության աջակցության ներքո գտնվող հիմնարկների աշխատակիցներին անդամագրել են ՀՀԿ-ի շարքերը: Անդամագրման ժամանակ հաշվի չի առնվել աշխատակիցների կարծիքը, անդամագրումը կրել է ստիպողական բնույթ:

Մյուս կողմից «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը /ԲՀԿ/ ֆինանսական ռեսուրսների օգտագործման միջոցով ողջ հանրապետության տարածքով իրականացրել է կուսակցության զանգվածային անդամագրման գործընթաց:

«Հայկական երկաթուղի» ՊՈԱԿ գործադիր տնօրեն Խրիմյանի կողմից հրահանգվել է բոլոր ենթակա ձեռնարկությունների տնօրեններին՝ մասնավորապես Ալավերդի կայարանի պետին, ներկայացնել աշխատողների որոշակի թվաքանակ՝ ստիպելով նրանց քվեարկել ի օգուտ ՀՀԿ-ի:

Լոռու մարզի Շիրակամուտ և Արևաշող գյուղերում գյուղացիներին սպառնացել են ՀՀԿ-ի օգտին չքվեարկելու դեպքում նրանց կիսակառույց տները հանել երկրաշարժից կիսաքանդ տների ֆինանսական փոխհատուցման ծրագրից: ՕԵԿ-ի շտաբի հաղորդմամբ՝ ընտրողներին սպառնացել են ՀՀԿ-ին չընտրելու դեպքում աղքատության ընտանեկան նպաստ ստանալու համար տեղեկանք չտրամադրել կամ հեռացնել աշխատանքից: Որոշ տեղերում եղել են դեպքեր, երբ նպաստառուների հանդեպ տեղացել են սպառնալիքներ, ՀՀԿ-ին ձայն չտալու դեպքում զրկել նպաստառուի իրավունքից:, մինչդեռ նպաստը հանդիսանում է նրանց ապրուստի միակ միջոցը:

Ալավերդու ACP գործարանի տնօրենը բացահայտ հրահանգել է կոլեկտիվին քվեարկել ՀՀԿ-ի օգտին, իսկ ՌԴ քաղաքացի Վալերի Մեջլումյանը տեղական «Անկյուն գումարած 3» հեռուստաալիքով քարոզել է ՀՀԿ-ի օգտին: Մինչդեռ ՀՀ ԸՕ-ն արգելում է օտարերկրացիներին նախընտրական քարոզչությամբ զբաղվել /հոդված 18, 4 կետ, 4 մաս/:

Ախթալայի «Մեթլ-Փրինց» գործարանի տնօրեն Սերոբ Տեր-Պողոսյանը ահաբեկել է աշխատակիցներին, թե ՀՀԿ-ի օգտին չքվեարկելու դեպքում չի վճարի աշխատակիցների աշխատավարձերը /աշխատակիցներին աշխատավարձի պարտքը կազմում է 30մլն դրամ/:

Վանաձորում գազի գրասենյակի աշխատակիցներին և երթուղային միկրոավտոբուսների վարորդներին կարգադրել են ստորագրություններ հավաքել ՀՀԿ-ի օգտին՝ յուրաքանչյուրը 10 ընտրողի անձնագրային տվյալներ:

## Ընտրակաշառքներ, ծառայությունների մատուցում, նախընտրական խոստումներ:

ՀՀ Ընտրական օրենսգիրքն արգելում է թեկնածուներին, /կուսկացություններին/ անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ /խոստանալ/ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել ծառայություններ /ՀՀ ԸՕ-ի 18 հոդված, 7-րդ կետ/:

Առանձին կուսակցությունների, թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության ողջ ընթացքում իրականացված գործողություններն ուղղակի ազդեցություն են թողել քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա.

- ընտրակաշառքների,
- բարեգործական օգնությունների և ծառայությունների մատուցման միջոցով:

Նախընտրական քարոզչության ողջ ընթացքում և քվեարկության օրը կուսակցությունների և թեկնածուների կողմից քաղաքացիների քվեարկության վրա զգալի ազդեցություն են թողել ընտրակաշառքները:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Ընտրակաշառքներ բաժանել են`

- Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը,
- Բարգավաճ Հայաստան Կուսակացությունը,
- ՀՅԴ կուսակցությունը,
- Միացյալ Աշխատանքային կուսակցությունը:

Նշված կուսակցությունների նախընտրական շտաբներում նախընտրական քարոզչության շրջանում քաղաքացիների կողմից բազմաթիվ սոցիալական աջակցության դիմումներ են ընդունվել:

Մայիսի 10-ին կազմակերպությունն ահազանգ ստացավ այն մասին, որ գումարներ են բաժանվում Վանաձորի քաղաքապետարանում:

Դիտորդները տեղում պարզեցին, որ Վանաձորի քաղաքապետարանի գանձապահի աշխատասենյակի մուտքի դռան մոտ հավաքված են քաղաքացիներ: Տեսախցիկից խուսափելով` քաղաքացիների մի մասը հեռացավ: Մի կին բացատրեց, որ նպաստ չի ստանում, թոշակը չի բավարարում, գոնե «մի 2 կոպեկ փող կստանա»: Վանաձորի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետը պնդում էր, որ իրավունք չունենք նկարահանել, փորձում էր հեռացնել քաղաքապետարանից` պատճառաբանելով, որ դիտորդներն իրավունք չունեն գտնվել քաղաքապետարանում: Մինչդեռ դիտորդական առաքելությունը կարգավորման ենթարկող որևէ փաստաթղթում նման արգելք սահմանված չէ:

Կազմակերպության գրավոր հարցմանը ի պատասխան` Վանաձորի քաղաքապետարանը տեղեկացրեց, որ սոցիալական ծրագրերի իրականացման համար Վանաձորի բյուջեով նախատեսված է 3 մլն 500 դրամ: 2007թ-ի մայիսի 10-ին սոցիալական ծրագրերի գծով քաղաքապետարանի բյուջե մուտքագրվել է 500 հազ դրամ, որը բաշխվել է շուրջ 50 ընտանիքների: Աջակցություն ստացող ընտանիքն ընտրելիս հաշվի է առնվել «աղքատության ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված լինելը: Մինչդեռ, նպաստառուների ցուցակում հաշվառված լինելը և աղքատության ընտանեկան նպաստ ստանալն ուղղակիորեն զրկում է ընտանիքին ցանկացած այլ տեսակի կողմնակի աջակցություն ստանալու հնարավորությունից: Ուստի այս պարագայում կամ ներկայացված պատճառաբանությունը զուրկ է որևէ հիմքից և սուտ, կամ դա կատարվել է հատուկ նպատակով` այն է նախադրյալներ ստեղծել, որպեսզի ընտանիքը հաջորդ փաստագրման ժամանակ ունենա ցածր անապահովության միավոր և զրկվի 7500 դրամ աղքատության ընտանեկան նպաստից:

## Տեղամասային հանձնաժողովների ձևավորումը

ՀՀ ԸՕ 35 հոդվածը սահմանում է, որ ընտրական հանձնաժողովները կազմավորվում են համամասնության սկզբունքով:

Այսինքն` հանձնաժողովի անդամները նշանակվում են.

- ԱԺ-ում խմբակցություն ունեցող կամ դաշինքի անդամ կուսակցություններից կողմից,
- հանրապետության նախագահի կողմից,
- պատգամավորական խմբի որոշմամբ,
- ՀՀ դատարանների խորհրդի կողմից /դատական դեպարտամենտի աշխատակից/:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները ձևավորվում են ընտրատարածքային հանձնաժողովների կողմից` ընտրական հանձնաժողովների կազմավորման համար սահմանված նույն սկզբունքով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը չպետք է պակաս լինի 9-ից:

ՀՀ ԿԸՀ-ի սահմանած ժամանակացույցով տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքները մեկնարկել են 2007թ ապրիլի 27-ի առաջին նիստով, որտեղ ընտրվել են հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը:

2007թ ապրիլի 27-ին տեղամասային ընտրական հանձնաժողովներում ղեկավար անձնակազմի

ընտրությունների կապակցությամբ հատուկ կարծիք է արտահայտել թիվ 30/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը: Նրա կարծիքով հանձնաժողովի նախագահի, տեղակալի և քարտուղարի ընտրությունները ձևական բնույթ են կրել: Իշխանամետ կուսակցությունների թվային առավելությունը նպաստել է, որ տեղամասային հանձնաժողովի նախագահն ու տեղակալն ընտրվեն իշխանամետ կուսակցություններից:

Թիվ 41 ընտրատարածքում ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչները նշել են, որ տեղամասային հանձնաժողովներում ընդդիմության տեղերը վաճառվել են /տրամադրվել են/ իշխանական կուսակցություններին, այլապես նրանք չէին ընտրվի հանձնաժողովի պատասխանատու պաշտոններում.

41/03 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է տեղակալ
41/07 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է քարտուղար,
41/08 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է տեղակալ
41/09 ընտրատեղամասում Ազգային Միաբանություն կուսակցության /ԱՄԿ/ ներկայացուցիչը ընտրվել է քարտուղար,
41/10 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է տեղակալ,
41/12 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է քարտուղար,
41/15 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է տեղակալ,
41/17 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է տեղակալ,
41/19 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է քարտուղար,
41/20 ընտրատեղամասում «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչն ընտրվել է քարտուղար:

### Լրատվամիջոցների լուսաբանման մոնիտորինգ

Նախընտրական քարոզչության շրջանում լրատվամիջոցների դիտարկումն իրականացվել է Լոռու մարզի 5 քաղաքներում:

Դիտարկվել է Վանաձորի «Լոռի TV», «Միգ TV» /տես հավելված 6/, «ՎաԲԱ», Սպիտակի «Սլավ Մեդիա», Ստեփանավանի «Ֆորտունա», Ալավերդու «Անկյուն գումարած երեք» տեղական հեռուստաընկերությունների եթերը` երեկոյան ժամը 18:00-ից 24:00-ը:
Լոռու մարզի հեռուստաընկերություններից նախանշված ժամանակահատվածում միայն «Անկյուն գումարած երեք» հեռուստաընկերությունը հրապարակեց հեռուստաեթերի 1 րոպեի արժեքը:
Այնուամենայնիվ, բոլոր հեռուստաընկերություններն էլ անդրադարձան ընտրություններին և առանձին թեկնածուներին ու կուսակցություններին /հեռուստատեսությունների եթերների դիտարկման արդյունքները կներկայացվի առանձին զեկույցով/:

Տեղական հեռուստահաղորդումների դիտարկումը նպատակ ուներ պարզել, թե պահպանվում է արդյոք թեկնածուներին հավասար հնարավորություններ տրամադրելու սկզբունքը:

Դիտարկվել է նաև հանրապետական տպագիր մամուլը /տես հավելված 4/:

Տպագիր մամուլի դիտարկման արդյունքները հնարավորություն են տվել հետևել ընտրական գործընթացներին ամբողջ հանրապետությունում և ընդհանրացնելով եզրակացնել, որ.

- ընտրակաշառքների բաժանումը,
- նախընտրական հանդիպումների խափանումը,
- թեկնածուների անհավասար մրցակցությունը

հատուկ են եղել բոլոր ընտրատարածքներում: Իսկ մայիսի 12-ին` քվեարկության օրը, բոլոր մարզերի ընտրատեղամասերում գրանցվել են նմանատիպ խախտումներ:

## 3. Քվեարկության պրոցեսի և արդյունքների դիտարկում

Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրվա դիտորդությունն իրականացնելու



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

նպատակով ԿԸՀ-ի կողմից գրանցվել է կազմակերպության 54 դիտորդ:
Գրանցված դիտորդների մի մասը /18 մարդ/ տարբեր պատճառաբանություններով մինչև քվեարկության օրը հրաժարվեցին դիտորդական առաքելությունից, և քվեարկության օրը դիտարկվել է Լոռու մարզի 28 ընտրատեղամաս, Տավուշի մարզի 8 տեղամաս:

Դիտարկումն ընդգրկել է նաև ընտրախախտումների վերաբերյալ քաղաքացիների ահազանգերը, դրանց հիման վրա իրականացրած միջոցառումները /տես հավելված 1/:

Տեղամասերում դիտորդությունն իրականացվել է տեղամասային հանձնաժողովի աշխատանքները սկսվելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփումը՝ մայիսի 12-ի առավոտյան 7:00ից մինչև մայիսի 13-ի առավոտյան 5:00-ն:
Միջին հաշվարկով յուրաքանչյուր տեղամասում իրականացվել է 20 ժամ դիտորդություն:

Քվեարկության պրոցեսի դիտարկումն իրականացվել է ՀՀ ԸՕ-ի և ԿԸՀ կողմից ընդունված որոշումներին համապատասխան: Դիտորդների կողմից դիտարկումներ են իրականացվել թե՛ ընտրատեղամասում, թե՛ քվեարկության սենյակում:

Դիտարկման առարկա են հանդիսացել.

- տվյալ ընտրատեղամասում քարոզչությունը կամ քաղաքացիներին ուղղորդումը ընտրատեղամասում կուտակումները,
- քվեարկության սենյակում կուտակումները,
- հանձնաժողովի կազմը և քվեարկության գործընթացի կազմակերպումը,
- վստահված անձանց և դիտորդների գործողությունները,
- քաղաքացիների անձնագրային տվյալների և ընտրացուցակների անհամապատասխանությունը,
- քվեարկության գործընթացի գաղտնիության ապահովումը,
- ընտրողների թվին համապատասխան քվեաթերթիկների առկայությունը,
- քվեների ճշգրիտ հաշվարկի ապահովումը,
- քվեարկության արդյունքների, ընտրախախտումների վերաբերյալ արձանագրությունների կազմումը:

## Դիտորդների գործունեության երաշխիքները

ՀՀ ԸՕ-ի համաձայն դիտորդներն իրավունք ունեն անարգել ծանոթանալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, հանձնաժողովի նախագահին դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել, որոնց վերաբերյալ վերջինս պարտավոր է միջոցներ ձեռնարկել:
Դիտորդները պատասխանատվության չեն ենթարկվում ընտրությունների ամփոփման և արդյունքների վերաբերյալ իրենց արտահայտած կարծիքի համար:

Մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրությունները գնահատելիս հաշվի են առնվել ընտրությունների կազմակերպման, իրականացման համապատասխանությունը .

- ՀՀ ԸՕ-ին,
- ՀՀ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներին:

36 ընտրատեղամասերում իրականացված դիտարկումների արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

1. 2007թ մայիսի 12-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունները չեն համապատասխանում ժողովրդավարության չափանիշներին,
2. ընթացել են ՀՀ ԸՕ-ի և Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի որոշումների այնպիսի խախտումներով, որոնք էական ազդեցություն են թողել քվեարկության ընթացքի և ընտրությունների արդյունքների վրա:

## Ընտրացուցակների և ընտրողների թվի անհամապատասխանությունը

ՀՀ Ընտրական օրենսգրքում իրականացված փոփոխությունների համաձայն` ընտրողների ցուցակները կազմել և համակարգել է ՀՀ Ոստիկանության Անձնագրային և հրավերների վարչությունը /հոդված 9-ը/:

Նախնական ուսումնասիրությամբ` ՀՀ Ոստիկանության Անձնագրային և հրավերների վարչության տրամադրած ցուցակներում առկա են եղել ընտրողների տվյալների վերաբերյալ հետևյալ անճշտությունները.

- ընտրացուցակներում նշված են եղել մահացածների անուն ազգանուններ, որոնք, ի դեպ, երբեմն նաև գնացել են քվեարկության
- միևնույն հասցեում գրանցված են եղել 7-20 անձ` տարբեր ազգանուններով, որոնց մեծ մասը փաստացի բնակվելիս չի եղել տվյալ հասցեում,
- մտահոգություն կար, որ քաղաքում հաշվառում ունեցող քաղաքացիները միաժամանակ վերահաշվառվել են այլ հասցեներում:
- կան նաև դեպքեր, երբ ըտանիքի անդամը չի էլ իմացել, որ իր տանը հաշվառված են ծատ ավելի անձինք, քան իրականում բնակվում են: Ընդ որում, դրանք եղել են մարդիկ, որոնց նրանք անգամ չեն էլ ճանաչել:

Ընտրողների փաստացի և ընտրացուցակներում առկա տվյալների անհամապատասխանությունը նաս քվեարկության օրը զգալի խախտումների հիմք է հանդիսացել: Նման խախտումներն առկա են եղել առավելապես գյուղական համայնքներում:

Թիվ 30 ընտրատարածքի 9 առանձին բնակելի հասցեներում հաշվառված քաղաքացիների թիվն ըստ, ԿԸՀ ինտերնետային էջում տեղադրված ընտրողների ռեգիստրի տվյալների, եղել է 158:

Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Դաշտադեմ գյուղում ընտրացուցակում ընդգրկված է 178 ընտրող, որից փաստացի /«Դաշինք» կուսակցության տվյալներով/ առկա է եղել 53-ը: Քվեարկության արձանագրություններով այդ նույն գյուղում ընտրությանը մասնակցել է 96 մարդ:

Նման անճշտությունները հիմք են հանդիսացել, որ տեղամասերում հայտնաբերվեն փաստեր, երբ տվյալ հասցեի բնակիչ չհանդիսացող անձինք փաստացի մասնակցել են քվեարկությանը տվյալ հասցեի տեղամասում:

Թիվ 30/21 տեղամասում քվեարկության եկած ամուսինները հայտնաբերել են, որ իրենց հասցեում գրանցված են 4 այլ անձինք, որոնց իրենք չեն էլ ճանաչում: Նրանցից 2-ը մասնակցել էր քվեարկությանը` ստորագրելով ընտրացուցակներում իրենց անունների դիմաց:

Անճշտությունները հատուկ են եղել ոչ միայն Լոռու մարզին, այլ տարածված են եղել հանրապետության ողջ տարածքով և էական ազդեցություն են թողել ընտրությունների արդյունքների վրա:

Թիվ 41 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու Հակոբ Հակոբյանի նախընտրական շտաբում տեղեկացրել են, որ դեռևս նախընտրական քարոզչության շրջանում մահացածներին ընտրացուցակներից հանելու իրենց առաջարկությունից հետո ընտրացուցակներում ոչ մի փոփոխություն չի կատարվել:

Կարելի է եզրակացնել, որ ընտրողների գրանցամատյանում արձանագրված և փաստացի



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

քվեարկությանը մասնակցած ընտրողների թվերը չեն համապատասխանում, ուստի մտահոգություն կա, որ բացակա անձանց փոխարեն քվեարկություն է իրականացվել, իսկ որոշ տեղամասերում նաև լցոնումներ են եղել: Բազմաթիվ են եղել կրկնակի քվեարկությանդեպքերը:

## Ընտրատեղամասերում կուտակումների ընդհանուր բնութագիրը

ՀՀ Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնք իրավունք ունեն ներկա գտնվել տեղամասային կենտրոնում, ինչպես նաև ընտրողների թիվը, որոնք միաժամանակ կարող են ներկա գտնվել քվեարկության սենյակում: Այդ թիվը չի կարող գերազանցել 15-ը /ԸՕ-ի 54 հոդված, 4-րդ կետ/:

Դիտարկումների ընթացքում ընտրատեղամասերում ընտրողների պարբերական կուտակումներ են գրանցվել: Կուտակումներն առաջացել են կազմակերպված ձևով քաղաքացիներին միկրոավտոբուսներով, ավտոբուսներով տեղամաս քվեարկության բերելու և ուղղորդելու արդյունքում:

Ուղղորդողները քվեարկության սենյակում սպասել են մինչև իրենց բերած քաղաքացիների քվեարկման ավարտը և կազմակերպված ձևով նրանց հետ տարել:

Ուղղորդումը պայմանավորված է եղել քաղաքացիներին ընտրակաշառքի, խոստումների միջոցով շահագրգռելով կամ վախի և սպառնալիքի գործադրմամբ:

Ընտրողներին ուղղորդելու մասին վկայում են փաստերը, երբ տեղամասերում իրականացվել է բաց քվեարկություն, հանձնաժողովի անդամը, վստահված անձը, նույնիսկ դիտորդը քվեաթերթիկի վրա մատնանշել են կոնկրետ թեկնածուի, կուսակցության համարը:

Շատ հաճախ միևնույն անձը ընտրատեղամաս ներկայացել է մի քանի անգամ` տարբեր ընտրողներին օգնելու պատրվակով, մինչդեռ իրականում նրա ներկայանալը հետապնդել է կրկնակի քվեարկության նպատակ:

Վանաձորի թիվ 6 դպրոցի շենքի բակում` թիվ 30/28 ընտրատեղամասի հարևանությամբ, ՀՅԴ կուսակցությունը քվեարկության օրը 3000-4000 դրամ է բաժանել ընտրողներին:

Թիվ 30/28 ընտրատեղամասում արձանագրվել է, թե ինչպես է քաղաքացին քվեարկությունից հետո նկարում քվեաթերթիկը բջջային հեռախոսով:

Մարդկանց կուտակումներ նկատվել են.

| | |
|---|---|
| թիվ 29/03 ընտրատեղամասում | 14:00-ից |
| թիվ  29/06 ընտրատեղամասում | 12:10-ից |
| թիվ 29/08 ընտրատեղամաս ում | 18:30-ից |

Թիվ 30/02 ընտրատեղամաս քվեարկության բերած ծեր կնոջ փոխարեն ուղղակիորեն իր նախընտրած թեկնածուի օգտին քվեաթերթիկում նշում է կատարել «Ընտրությունը քոնն է» կազմակերպության դիտորդը: Մինչդեռ, Երևանի թիվ 1 ընտրատարածքի 1/0016 ընտրատեղամասում նույն կազմակերպության դտորդը նշեց, որ ընտրական գործընթացը կատարվում է բացառապես օրենքի պահանջին համապատասխան և իրենք աչալուրջ են ցանկացած խախտում արձանագրելու և դրանք համապատասխան մարմիններին ներկայացնելու հանդեպ:

Թիվ 30/25 տեղամասում ծեր ընտրողների փոխարեն ստորագրել և քվեարկել են նրանց քվեարկության բերած անձինք:

Թիվ 30/25 ընտրատեղամասում քվեարկության եկած զինվորականներին ուղղորդել է նրանց հրամանատարը, նրանց շարքով քվեարկության ուղեկցել:

Մարդկանց կուտակումները հնարավորություն չեն տվել հետևել հանձնաժողովի աշխատանքներին, ստուգել ընտրացուցակներում ընտրողների վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am



Մարդկային կուտակումներ թիվ 30/25 ընտրատեղամասի քվեարկության սենյակում




Մարդկային կուտակումներ թիվ 30/25 ընրատեղամասում

Թիվ 29/06 ընտրատեղամասում քաղաքացին հայտնաբերել է, որ իր փոխարեն արդեն քվեարկել են:

Թիվ 29/03 տեղամասում դիտորդի կողմից հանձնաժողովի նախագահին տվյալ փաստի վերաբերյալ ներկայացված դիտողությունն էական դեր չի խաղացել:



Մարդկային կուտակումներ Վանաձորի Տավրոս թաղամասում տեղակայված ՀՀԿ-ի նախընտրական շտաբի մոտ



Նույն շտաբից ընտրատեղամաս քվեարկության բերված քաղաքացիներ

Քվեարկության օրը մեծ են եղել մարդկանց կուտակումները նաև այս կամ այն կուսակցության, թեկնածուի նախընտրական շտաբների մոտ:

Շտաբների աշխատակիցները բացատրել են, որ քաղաքացիների կուտակումները պայմանավորված են նրանով, որ ստուգվում և ճշտվում են ընտրացուցակների տվյալները: Մինչդեռ, ինչպես սահմանում է ՀՀ ԸՕ-ն, ընտրացուցակները վերջնական տարբերակով պետք է վաղուց ճշտված լինեն, ուստի այս պարագայում ևս ուղղակիորեն կատարվել է օրենքի խախտում: Հետևաբար ներկայացված բացատրություն - պատճառաբանությունը զուրկ է որևէ իրավական հիմքից: Սրանից կարելի է եզրակացնել որ կամ համապատասխան մարմինները (ոստիկանության անձնագրային բաժին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ ) կամ անգործություն են ցուցաբերել և չեն շտկել ընտրացուցակները կամ կուտակումները ստեղծվել են ընտրակաշառքի բաժանման գործընթացները կոծկելու նպատակով:

Մինչդեռ, քաղաքացիները սպասել են շտաբների մոտ ընտրակաշառքների:

Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասում Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբի մոտ կանգնած կինը բողոքել է, որ իրեն քվեարկության են կանչել միայն 19:00-ին՝ խոստանալով դրամ տալ: Սակայն տեղամասի կուտակումները հնարավորություն չեն տվել նրան մասնակցել քվեարկությանը: Ըստ հավաստի տեղեկությունների՝ ՀՀԿ-ի կողմից ընտրակաշառքները բաժանվել են նաև իր աջակցությունը ստացող մեծամասնական թեկնածուների նախընտրական շտաբներից:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

Թիվ 30/21 ընտրատեղամասի մոտ երեկոյան ժամը 17:00-ից հավաքված են եղել մոտ 100 քաղաքացի:

Նույն տեղամասից 15 մետր հեռավորության վրա տեղակայված է եղել պատգամավորության թեկնածուի նախընտրական շտաբը: Ընտրական օրենսգիրքն այս կապակցությամբ սահմանում է 50 մետր շառավիղ:

## Տեղամասային հանձնաժողովների գործողությունը

Տեղամասային հանձնաժողովների ձևավորման գործընթացը և հանձնաժողովի կազմը զգալի ազդեցություն են թողել քվեարկության գործընթացի վրա:

Տեղամասային հանձնաժողովները անտեսել և արձանագրություններ չեն կազմել կուտակումների փաստերի, տեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձնանց, ընտրացուցակներում առկա անճշտությունների կապակցությամբ:

Դիտարկվող տեղամասերի մեծ մասում հանձնաժողովի նախագահը կամ տեղակալը հանդիսացել են տվյալ կառույցի տնօրեն կամ ՏԻՄ-ի, սոցիալական ծառայության աշխատակից:

Հանձնաժողովի որոշ անդամներ ի սկզբանե լիազորված են եղել անկաշկանդ գործողություններ իրականացնել, այդ թվում նաև ընտրակեղծիքներ: Սրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ հանձնաժողովի անդամների կողմից ուշադրության չեն արժանացել դիտորդների, վստահված անձանց դիտողությունները, առաջարկություններն ու պահանջները՝ ուղղված նկատված ընտրախախտումների կանխարգելմանը:

Թիվ 30/02 ընտրատեղամասում քվեաթերթիկներ տրամադրող հանձնաժողովի անդամը քվեաթերթիկը տալիս մատնանշել է ՀՀԿ-ի աջակից թեկնածուին:

Թիվ 30/28 ընտրատեղամասում, երբ քաղաքացին քվեարկության է ներկայացել մի քանի անձնագրով, արձանագրություն չի կազմվել:

Թիվ 31/07 ընտրատեղամասում արձանագրություն չի կազմվել, երբ քաղաքացին հայտնաբերել է, որ իր փոխարեն արդեն քվեարկել են:

Թիվ 29/06 ընտրատեղամասում հանձնաժողովը ընտրողին լրացուցիչ ընտրացուցակում ընդգրկել է թաղամասային հիմնարկի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

Ընտրական հանձնաժողովների կողմից ընթացակարգային նման խախտումները չարձանագրելը, որոնք ազդեցություն են ունեցել ընտրությունների արդյունքների վրա, իր անմիջական ազդեցությունն է ունեցել այն հանգամանքի վրա, որ ընտրությունները գնահատվեն ազատ և արդար:

## Ընտրական խախտումների կանխարգելման գործողությունները

Կազմակերպության կողմից ընտրախախտումների կանխարգելումն իրականացվել է թե՛ նախընտրական քարոզչության ընթացքում թե՛ քվեարկության պրոցեսի, թե ընտրատարածքային հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփման ընթացքում:

Կազմակերպության դիտորդների կողմից ընտրախախտումների կանխարգելմանն ուղղված գործողությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ դիտորդական առաքելության իրականացումը կարևոր երաշխիք է ընտրախախտումների կանխարգելման, ազատ և արդար ընտրությունների ապահովման համար, եթե նման գործունեություն իրականացվի հանրապետության բոլոր ընտրատեղամասերում: Մինչդեռ, իրականում առկա իրավիճակն այլ բանի մասին է փաստում: Մասնավորապես, եղել են դեպքեր, երբ դիտորդների ահազանգերին պատշաճ արձագանք չի տրվել, ոստիկանությունը դրսևորել է բացահայտ անգործություն իսկ որ ամենակարևորն է, բռնի կերպով խոչընդոտել են նրանց աշխատանքի իրականացմանը:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

Քաղաքացիական հասարակության կողմից դիտորդական առաքելության արդյունավետության սահմանափակումը պայմանավորված է.

- անհրաժեշտ թվով պատրաստված ռեսուրսների /մարդկային, տեխնիկական/ բացակայությամբ,
- նախորդ 2003թ ընտրությունների ժամանակ դիտորդների նկատմամբ ճնշումներ և բռնություններ իրականացրած անձանց անպատժելիությամբ,
- քաղաքացիների կողմից խախտումների վերաբերյալ վկայություններ տալուց խուսափելով,՝ վախի և սպառնալիքի ազդեցությամբ:

Կազմակերպության կողմից դիտորդական առաքելության իրականացումը նախընտրական քարոզչության շրջանում և քվեարկության օրը հնարավորություն է տվել կանխել.

- ընտրակաշառքների և քաղաքացիների վրա ճնշումներ գործադրելու առանձին փորձերը,
- նախընտրական հանդիպումների խոչընդոտումները,
- այլ անձանց փոխարեն քվեարկությունը,
- հանձնաժողովի ոչ օրինական գործունեությունը,
- քվեների հաշվարկի ժամանակ այլ կուսակցությունների օգտին ձայների վերաբաշխումը,
- տեղամասերում քաղաքացիների կուտակումները:

Նախընտրական քարոզչության շրջանում կազմակերպությունը ընտրախախտումների վերաբերյալ 4 միջանկյալ զեկույց է պատրաստել և ներկայացրել հանրությանը:

Նախընտրական քարոզչության ողջ ընթացքում կազմակերպության կողմից միայն Վանաձորում 108 ընտրախախտում է արձանագրել:

Մայիսի 12-ին՝ քվեարկության օրը, կազմակերպությունը ստույգ փաստեր պարունակող մոտ 24 ահազանգ է ստացել:



Թիվ 29/12 ընտրատեղամաս քվեարկության բերված քաղաքացիներ

Դրանք վերաբերվել են կոնկրետ տեղամասում ընտրակաշառքների բաժանմանը, քաղաքացիներին միկրոավտոբուսներով քվեարկության տանելուն, տեղամասային հանձնաժողովի անգործությանը կամ օրենքի բացահայտ խախտման դեպքերին

Արձանագրված փաստերի հիմքով.

- ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ուղղվել է 10 դիմում նախընտրական քարոզչության կարգի խախտումները կանխելու համար միջոցառումներ ձեռնարկելու նպատակով,
- ևս 3 դիմում քվեարկության օրը,
- համայնքի ղեկավարներին՝ 6 դիմում,
- Ոստիկանության անձնագրային բաժնին՝ 3 դիմում,



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

- Ոստիկանությանը` 3 դիմում,
- 1 դիմում-բողոք է ուղարկվել Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովին` թիվ 29-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները բողոքարկելու նպատակով,
- քաղաքացիների համար պատրաստվել է ընտրացուցակներում վերականգնվելու 13 դիմում,
- թեժ հեռախոսագծի միջոցով 15-20 քաղաքացու տեղեկատվություն է տրամադրվել ընտրական իրավունքի վերաբերյալ:

Տարբեր պետական մարմիններին ուղղված կազմակերպության 25 դիմումներից 19-ի կապակցությամբ ստացվել են դրական պատասխաններ:

## Իրավապահ մարմինների արձագանքները

Ընտրախախտումների կանխարգելման և դրանց վերացման ուղղությամբ կազմակերպության և առանձին թեկնածուների դիմումներով բարձրացված հարցերի ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել նաև իրավապահ մարմինների կողմից:

Մայիսի 1-ին ԱԺ պատգամավորության թեկնածու Լարիսա Փարեմուզյանին սպառնալու փաստով Ոստիկանության կողմից ձեռնարկված գործողությունների միջոցով հայտնաբերվել են մեղավորները:

Մայիսի 1-3-ը ԱԺ պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանի նախընտրական հանդիպումները խոչընդոտելուց հետո մյուս հանդիպումների անխափան անցկացումն ապահովելու նպատակով ներկա են եղել ոստիկանության աշխատակիցները:

Թիվ 30/21 ընտրատեղամասում մայիսի 12-ին ոստիկանության աշխատակիցների կողմից կանխվեց քաղաքացիների ներխուժումը քվեարկության սենյակ:

Նախընտրական քարոզչության շրջանում Վանաձորում նաև սպանության դեպք գրանցվեց:

Չնայած պաշտոնական վարկածին, որ սպանությունը տեղի է ունեցել կենցաղային հողի վրա, այնուամենայնիվ դեպքը մեծ ազդեցություն ունեցավ ընտրական գործընթացների վրա:

Սպանության մեջ կասկածվող Սամվել Դիլոյանը, ըստ ՀՀ Գլխավոր դատախազության ինտերնետային էջում տեղադրված տեղեկատվության, ԱԺ պատգամավորության թեկնածու Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբի անդամ էր:

Մայիսի 3-ին տեղական «Լոռի TV» հեռուստալիքով ելույթի ժամանակ և նախընտրական քարոզչության վերաբերյալ 3-րդ միջանկյալ զեկույցի հրապարակման մամուլի ասուլիսի ժամանակ կազմակերպության ղեկավարը զուգահեռներ անցկացրեց նույնատիպ սպանությունների միջև: Նա ընդգծեց Լոռու մարզի դատախազության տարբերակված մոտեցումը միանման սպանությունների նկատմամբ: Առաջին սպանության դեպքում մեկ ցուցմունքի հիման վրա դատախազությունը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան` կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Երկրորդ` նախընտրական քարոզչության ընթացքում սպանության դեպքում, կալանքի` որպես խափանման միջոցի միջնորդություն չներկայացվեց Լոռու մարզի առաջին ատյանի դատարան, չնայած դատախազն իր ելույթում հայտնեց, որ Սամվել Դիլոյանը մասնակցել է կռվին, բայց ոչ սպանությանը:

Ի պատասխան դրա` Լոռու մարզի դատախազը նույն «Լոռի TV» հեռուստաընկերությամբ հրապարակավ ներկայացրեց իր կարծիքը` նշելով, որ կազմակերպության ղեկավարը որպես սպանության վկա կանչեց դատախազություն:

## Քվեարկության արդյունքների վերլուծություն

Մայիսի 12-ի քվեարկության արդյունքների անճշտությունները, ԿԸՀ-ի հայտարարությամբ, անճշտությունները մեխանիկական բնույթ են կրել:

Քվեաթերթիկների, ընտրողների ստորագրությունների և ընտրացուցակներում գրանցված ընտրողների թվի տարբերությունը բացատրվում է նրանով, որ տեղամասային հանձնաժողովներն



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

աշխատել են շուրջ 20 ժամ, և հոգնածության պատճառով թույլ են տվել որոշակի վրիպակներ:

Տեղամասային հանձնաժողովներից ստացված արձանագրությունների տվյալների համադրումը վկայում է հետևյալ խախտումների մասին.

- **առանձին տեղամասերում կեղծվել է ընտրություններին մասնակցած քաղաքացիների թիվը,**
- **հաշվարկի ընթացքում վավեր քվեաթերթիկները վերաբաշխվել են այս կամ այն կուսակցության օգտին:**

Թիվ 29, 30, 31, 32 ընտրատարածքների ընտրատեղամասերում քվեարկությանը մասնակցած ընտրողների և քվեաթերթիկների ելունդների թվերի տարբերությունը կազմել է 1-ից մինչև 6-ը /տես հավելված 2, 5, 7/:

## Օրենսդրական թերություններ

Կազմակերպության դիտարկումների և գործողությունների ընթացքում բացահայտվեցին ՀՀ ԸՕ-ի թերություններ, որոնք էապես նվազեցրեցին ընտրախախտումների կանխարգելման արդյունավետությունը:

Ընտրական գործընթացները կարգավորվում են ՀՀ ԸՕ-ով, ԿԸՀ-ի որոշումներով, Քրեական և Վարչական օրենսգրքերի այն հոդվածներով, որոնք պատասխանատվություն են սահմանում ընտրախախտումների համար:

Նախորդ ԱԺ-ի ընտրություններից հետո ՀՀ ԸՕ-ի 141 հոդվածներում կատարվել են շուրջ 328 փոփոխություններ:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունները միտված են կանխել ընտրախախտումները, բացառել ընտրակեղծիքները: Մասնավորապես ՀՀ ԸՕ-ի նոր փոփոխությամբ պատասխանատվություն է սահմանվել նաև ընտրակաշառք վերցնողների համար:

Քվեարկության պրոցեսում խախտումները նվազագույնի հասցնելու համար պատրաստվել են հատուկ ծրարներ: Ընտրողը իր նախընտրած թեկնածուի օգտին նշում կատարելուց հետ քվեաթերթիկը տեղադրում է ծրարի մեջ, նոր գցում քվեատուփը:

Այնուամենայնիվ, տեսականորեն սահմանված հոդվածները չեն ապահովում ընտրական պրակտիկ գործընթացի ամբողջ ծավալը:

- ***Մինչ նախընտրական քարոզչությունն ընկած ժամանակահատվածի օրենսդրական չկարգավորվածությունը***

  ՀՀ ԸՕ-ի 4-րդ գլուխը սահմանում է նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները: Օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ կետը նախընտրական քարոզչության մեկնարկը համարում է թեկնածուների գրանցման համար սահմանված վերջին օրվա հաջորդ օրը: Այն ավարտվում է քվեարկության նախորդ օրը: Ընտրական օրենսգիրքը չի սահմանում և չի որակում նշված շրջանին նախորդող ժամանակահատվածը: Մինչդեռ, թեկնածուների, կուսակցությունների կողմից այդ ժամանակահատվածում իրականացվել են գործողություններ, որոնք իրենցում պարունակել են քարոզչական երանգներ: Դրանք չեն կարգավորվում այլ օրենքով ևս, այդ գործողությունները չեն մտնում նաև պատգամավորի կամ պատգամավորի թեկնածուի աշխատանքի նկարագրության մեջ:

  ***Նախընտրական շտաբների կազմավորման կարգը***

  ՀՀ ԸՕ-ի նախընտրական քարոզչությանը վերաբերող գլուխը ներառում է քարոզչական տպագիր նյութերի տարածումը կարգավորող դրույթներ: Օրենսդրական կարգավորումից, սակայն, դուրս են մնում թեկնածուի, կուսակցության նախընտրական շտաբների աշխատանքների համակարգումը: Օրենսգիրքը չի սահմանում նախընտրական շտաբների ձևավորման կարգը, ժամանակը, դրանց առավելագույն քանակը, շտաբների աշխատակազմի թիվը, վճարման կարգը: Մինչդեռ



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

նախընտրական քարոզչության ամբողջ աշխատանքներն իրականացնում և պատասխանատվություն են կրում հենց նախընտրական շտաբները:

- *Մեծամասնական կարգով ԱԺ պատգամավորության թեկնածուի գրանցումը*

ՀՀ ԸՕ-ի 108 հոդվածով պատգամավորության թեկնածուները գրանցվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի 5-րդ մասում թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի շարքում նշվում է նաև նրա գույքի և եկամուտների հայտարարագիրը, որը տեղեկություններ է պարունակում թեկնածուի նախորդ տարվա եկամուտների վերաբերյալ: 108-րդ հոդվածի 4-րդ կետը նշում է, որ թեկնածուի գրանցման համար ներկայացված փաստաթղթերում անճշտություններ հայտնաբերելու կամ փաստաթղթերը կեղծված լինելու դեպքում հանձնաժողովը մերժում է թեկնածուի գրանցումը: Ընտրական օրենսգիրքը, սակայն, չի հստակեցնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունները հայտարարագրերում նշված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար: Գործնականում, հայտարարագրի մեջ նշված տեղեկատվության հիման վրա ծագած խնդիրը օրենսդրական կարգավորում չի ստանում:

*Թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին պատգամավորության թեկնածու Վահան Մաղաքյանը դիմում էր ներկայացրել՝ մյուս թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով: Նա հիմնավորում էր, որ պատգամավորության մյուս թեկնածու Արկադի Համբարձումյանի հայտարարագրում նշված տեղեկատվությունը կեղծված է և չի համապատասխանում իրականությանը: Որպես ապացույց՝ ներկայացվում էր նույն պատգամավորի թեկնածուի հայտարարագրում նշված 2006թ. եկամուտները /մոտ 3մլն դրամ/ և նախընտրական բուկլետում նշված պատգամավորի ծախսերը՝ բարեգործությունների ծավալը վերջին 3,5 տարում /29.5մլն դրամ/:*

*Հանձնաժողովը մերժեց Վահան Մաղաքյանի դիմումը՝ պատճառաբանելով, որ ներդրումների վերաբերյալ համայնքի ղեկավարների կողմից տրամադրված տեղեկանքներով դրանք իրականացվել են 2007թ-ի հունվարից: Այսինքն՝ դրանք պատգամավորի թեկնածուի հայտարարագրի համար նախատեսված ժամանակաշրջանի մեջ չեն մտնում: Հանձնաժողովը որևէ տեղեկատվություն չի տրամադրել, թե արդյոք հնարավոր էր նման եկամուտներ ստանալ 2007թ առաջին ամիսներին, կամ որոնք են այդ եկամուտների ստացման աղբյուրները: Հանձնաժողովը որևէ իրավասություն չուներ ստուգելու թեկնածուի կողմից բարեգործության նպատակով ներդրած գումարների աղբյուրները:*

*Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը ևս մերժեց Վահան Մաղաքյանի դիմումը: Դատարանը գտավ, որ Ա. Համբարձումյանի գրանցումն անվավեր ճանաչելով՝ հանձնաժողովը չի խախտել դիմումատու Վահան Մաղաքյանի ընտրելու կամ ընտրվելու իրավունքը: Թեև դատաքննության ընթացքում պարզ դարձավ, որ Արկադի Համբարձումյանի կողմից արված նվիրատվությունները հաշվապահական ձևակերպում չեն ստացել, արվել են կանխիկ, և պահվել են կոնկրետ անձանց ձեռքում:*

*ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի նկատմամբ, սակայն, քրեական գործ հարուցվեց 50 հազ ԱՄՆ դոլլար կանխիկ գումար բնակարանում հայտնաբերելու փաստով և մեղադրանք առաջադրվեց կեղտոտ փողերի լվացման մեջ:*



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

# 4. Եզրակացություններ

Ամփոփելով 2007թ. մայիսի 12-ի ԱԺ ընտրությունների դիտարկման արդյունքները՝ կարել է եզրակացնել.

1. Նախընտրական քարոզչության ընթացքում չեն ապահովվել կուսակցությունների և թեկնածուների հավասար մասնակցությունը
2. վարչական ռեսուրսները համատարած օգտագործվել են ՀՀԿ-ի և նրա աջակցությունը վայելող թեկնածուները
3. ֆինանսական ռեսուրսների ստվերային անվերահսկելի ծավալների կիրառմամբ մի շարք կուսակցություններ համատարած ընտարակաշառքներ են բաժանել քվեարկության և դրան նախորդող օրերին
4. լրատվական միջոցները անհավասար են լուսաբանել թեկնածուների և կուսակցությունների նախընտրական քարոզարշավը,
5. ճնշումներ են գործադրվել ընտրողների և թեկնածուների նկատմամբ նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում, նաև քվեարկության և դրան նախորդող օրը,
6. հատկապես գյուղական բանակավայրերում տեղի է ունեցել բաց քվեարկություն, և քվեարկություն բացակա ընտրողների փոխարեն
7. համապատասխան լիազոր մարմինների կողմից ընտրախախտումների վերաբերյալ հայտարարությունները համարժեք վերաբերմունքի չեն արժանացել:

Այսպիսով, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը դիտորդական առաքելության արդյունքում ՀՀ ԱԺ-ի մայիսի 12-ի ընտրությունները գնահատում է ոչ արդար, ոչ ազատ, քանի որ դրանք չեն համապատասխանել ՀՀ ԸՕ-ի պահանջներին և ժողովրդավարության նվազագույն չափանիշներին:

**Առաջարկություններ**

Հաշվի առնելով հանրապետությունում սպասվող առաջիկա նախագահական ընտրությունները՝ կազմակերպությունը միաժամանակ առաջարկում է.

- ուժեղացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտների արդյունավետ վերահսկողությունը ընտրական գործընթացների նկատմամբ
- նախընտրական քարոզչությանը զուգահեռ ապահովել ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկատվության և զեկույցների պարբերական հրապարակում
- կատարելագործել ընտրական օրենսդրությունը:

ՀՀ ողջ տարածքում քաղաքական կուսակցությունների, դիտորդակա առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վստահված անձանց ինստիտուտների արդյունավետ կիրառման դեպքում հնարավոր կլինի կանխարգելել բազմաթիվ խախտումներ և կեղծիքներ, կայացնել ժողովրդավարական չափանիշներին համապատասխան ընտրություններ:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

# 5. Հավելվածներ

Հավելված 1

## 2007թ մայիսի 12-ին՝ քվեարկության օրն արձանագրված խախտումները

Վանաձոր

- Թիվ *29/03* ընտրատեղամասում կուտակումներ արձանագրվել են ժամը 12:00-ի, 12:45-ի, 14:00-ի սահմաններում: 14:00-ին տարածքում նկատվել է ավտոբուս /կարմիր և սպիտակ գույների/: Առավոտյան Հանձնաժողովի նախագահը Ժառանգության վստահված անձին չի թույլատրել ծանոթանալ կնիքի թաց և չոր լինելուն:

- Թիվ *29/04* ընտրատեղամասում ժամը 11:10-ին քաղաքացիներից մեկին ընտրությանը մասնակցելու համար տեղեկանք է տրվել: Այդ փաստն արձանագրվել է միայն ընտրական լրացուցիչ ցուցակում ընդգրկվելուց հետո՝ «Ժառանգություն» կուսակցության վստահված անձի կողմից:

- *Թիվ 29/06* ընտրատեղամասում առավոտյան 08.10ր. հանձնաժողովի նախագահը 5ր-ով դադարեցրել է քվեարկությունը և հայտարարել, որ դիտորդներն ու վստահված անձինք չխանգարեն հանձնաժողովի աշխատանքին: Որոշ ընտրողներ բողոքել են տեղամասի անբավարար լուսավորությունից: Հանձնաժողովի նախագահը աթոռը դրել էր թելից այն կողմ՝ քվեախցիկների մոտ՝ իբր կարգը պաշտպանելու համար: 12.10-ին տեղամասում մոտ քսան մարդ է եղել: Ընտրողներից մեկը իր ընտրությունը կատարելուց հետո քարտուղարին բարձրաձայն հայտարարել է, որ ինքը քվեարկել է ՀՀԿ-ի օգտին: Ժամը 13.10ր. քաղաքացիները զույգ-զույգ են մտել քվեախցիկ և քվեարկել: Քվեարկության թեժ պահին քաղաքացիներից մեկը իր քվեարկությունն իրականացրել է քվեաթերթիկների կնքման համար նախատեսված սեղանի վրա: Թիվ 29/06 ընտրատարածքում 06 406 /Մերսեդես/ մակնիշի ավտոմեքենան մի քանի անգամ մարդիկ է բերել ընտրատեղամաս:

- Թիվ *29/12* տեղամասում հենց քվեատուփի մոտ քաղաքացու քվեարկությունից հետո փորձել են կաշառք տալ: Հանձնաժողովի նախագահը նկատել է, տվյալ քվեաթերթիկը ճանաչել անվավեր: 3439 պետհամարանիշի գազելը երեք անգամ ընտրողների է բերել ընտրատեղամաս: Նույն ընտրատեղամաս քվեարկության համար մարդկանց են տեղափոխել նաև կապույտ գույնի 36-906 պետհամարանիշներով ավտոբուսը, 2-րդ գծից հանված 04/83 L մակնիշի միկրոավտոբուսը, 09 մակնիշի 36-830 պետհամարանիշի մեքենան: Երևանի 46 ուղեգծի 22-56 պետհամարանիշի գազելը 2 անգամ գնացել է 29/12 ընտրատեղամաս:

- Թիվ *29/13* տեղամասում /նախագահ Զաիրա Քալաշյան/ նույն զինվորը քվեարկել է չորս անգամ: Հանձնաժողովի նախագահը ոչինչ չի ասել, արձանագրություն չի կազմվել:

- Թիվ *29/29*, թիվ *29/52* տեղամասերում քվեները հաշվելիս «Ժառանգություն» կուսակցության քվեաթերթիկներն ավելացրել են «Հայաստանի Հանրապետական կուսակցության»: քվեաթերթիկներին:

- Թիվ *30/02* ընտրատեղամասում մի քաղաքացի քվեարկել է 2 անգամ: Նույն տեղամասում ՄԱԿ-ի վստահված անձը պարբերաբար դուրս է եկել ընտրատեղամասից և խոսել ընտրողների հետ: Ժամը 12:20-ին մարդկանց տեղամաս են տեղափոխել 26 89 L, 06 09 L, 04 89 L և 04 69 L պետհամարանիշներով գազելները, ժամը 12:30-13:00-ի սահմաններում՝ 04 34 L դեղին



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

պետհամարանիշով երթուղային տաքսին՝ արդյունքում ընտրատեղամասում առաջացնելով կուտակումներ: Նույն երթուղային տաքսին տարբեր մարդկանց նույն տեղամաս է տարել 5-6 անգամ:

- Թիվ *30/03* ընտրատեղամասում առավոտյան ժամը 9:30-ի սահմաններում ԲՀԿ-ի Վանաձորի շտաբի պետ Գառնիկ Աքույանը, մտնելով ընտրատեղամաս, հայտարարել է, որ բոլոր վստահված անձինք ու դիտորդները պետք է կանգնեն հանձնաժողովի անդամների հետևում: Երբ դիտորդներն ու վստահված անձինք ասել են են, որ ազատ տեղաշարժվելու իրավունք ունեն, նա ավելացրել է, որ կարող են ազատ տեղաշարժվել հանձնաժողովի անդամների հետևում: Ընտրատեղամասում ԲՀԿ-ի և ՄԱԿ-ի վստահված անձինք պարբերաբար մոտեցել են ընտրողներին, առանձին զրուցել նրանց հետ:

- Թիվ *30/08* ընտրատեղամասում դեղին պետահամարանիշներով սպիտակ գազելը տասից ավելի մարդկանց է բերել հարևան տեղամաս՝ քվեարկության նպատակով: Ժամը 18:30-ից ակտիվացել է մարդկանց հոսքը: Քաղաքացիների քվեարկությունն ավարտվել է ժամը 21:10-ին՝ մինչև քվեարկել են քվեարկության սենյակում գտնվող բոլոր անձինք:

- Թիվ *30/20* ընտրատեղամասից առավելագույնը 15մ հեռավորությամբ տեղակայված է եղել Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբը: Քվեարկության ողջ ընթացքում շտաբի մոտ հավաքված են եղել մարդիկ: Ժամը 12:55-ին սպիտակ գույնի 05 64L մակնիշի միկրոավտոբուսով նախընտրական շտաբ են այցելել 10 արական սեռի ներկայացուցիչներ և դրսում մնացել մոտ 2 ժամ: Քաղաքացիներից շատերը քվեարկության գալիս մտել են նախընտրական շտաբ, այնուհետև խմբերով, հաճախ նույն շտաբի աշխատակցուհու ուղեկցությամբ, ներկայացել քվեարկության: Նույն աշխատակցուհին պարբերաբար ներկայացել է որպես Վ.Բաղդասարյանի վստահված անձ: Ժամը 11:15-ին 2 միկրոավտոբուսով քվեարկության են բերել ծերանոցի ծերերին: Քվեախցիկում միաժամանակ ներկա են եղել նույն ծերանոցի 3 աշխատակիցներ: Որպես ծերանոցի աշխատակից ներկայացող քաղաքացին ցանկացել է քվեարկել ծերերի փոխարեն՝ նրանց օժանդակություն ցուցաբերելու պատրվակով: Ծերերին օգնելու համար դրսից անծանոթ մի քաղաքացի է հրավիրվել: Կարբիշևի 1/10 հասցեի քաղաքացիները քվեարկության ժամանակ հայտնաբերել են, որ իրենց հասցեում գրանցված են 3 այլ անձինք, նրանցից 2-ը քվեարկել են: 19:00-ից տեղամասում աննկարագրելի կուտակումներ են առաջացել: 19.30-ին քաղաքացիների թիվը տեղամասում հասել է 100-ի: Մի երիտասարդ փորձել է քվեարկել եղբոր փոխարեն: Երբեմն նույն անձը մի քանի անգամ է մտել տեղամաս, թեև նա ոչ մի լիազորություն չի ունեցել:

- Թիվ *30/25* ընտրատեղամասում քվերակության ընթացքում կողմնակի անձ է ներկա եղել: Դիտորդը պահանջել է հանձնաժողովի նախագահից դուրս հրավիրել նրան, սակայն հանձնաժողովի նախագահը պատասխանել է, որ չի կարող դա անել: «Դու գիտես, թե նա ում տղան է, ես չեմ կարող նրան դուրս հրավիրել»: Տեղամասում ժամը 16:00-ից մեծ կուտակումներ են եղել, տեղի է ունեցել ընդհարում: 20:00-ին ընտրասենյակում ներկա է եղել միաժամանակ մոտ 50 մարդ: Հանձնաժողովը ներկա գտնվողներին թույլատրել է քվեարկել:

- Թիվ *30/28* ընտրատարածքում ժամը 9:05-ի սահմաններում քվեարկողը բջջային հեռախոսի միջոցով նկարել է քվեարկած քվեաթերթիկը: Տեղամասին կից 50մ հեռավորության վրա ՀՅԴ-ն ու ՀՀԿ-ն համատարած և անթաքույց կերպով ընտրակաշառք են բաժանել: ՏԸՀ-ի անդամներն օգնել են ընտրողներին քվեարկության ընթացքում: Նույն թոռնիկը մի քանի տատիկների տեղամաս է բերել քվեարկության: Նախ ներկայացել է որպես անչափահաս, սակայն վերջում ինքը ևս եկել է քվեարկության: Մի քաղաքացի ներկայացել է մի քանի անձնագրերով և փորձել քվեարկել: Տեղամասում արկղերը տեղադրված չեն եղել բոլորին տեսանելի վայրում: Հաշվարկման ժամանակ անճշտություններ են հայտնաբերվել. մասնավորապես՝ ծրարների և քվեաթերթիկների կորուստ:

- Թիվ *30/30* ընտրատեղամասում ժամը 15.56-ին հանձնաժողովի անդամների կողմից հայտնաբերվել



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

է, որ ընտրողներից մեկը փորձել է կրկնակի քվեարկել: Քանի որ նրա անվան դիմաց ստորագրված չի, եղել նրան թույլատրվել է քվեարկություն կատարել: Մի քանի րոպե անց նույն իրավիճակն է ստեղծվել մեկ այլ ընտրողի հետ, աղմուկ բարձրացնելուց հետո ընտրողը լքել է տեղամասը: Ընտրողներից մեկը, քվեարկության գնալով, պարզել, որ իր անվան դիմաց արդեն ստորագրված է: Ժամը 19.20-20.00-ը տեղամասում միաժամանակ ներկա են եղել 30-ից ավելի ընտրողներ: Ներկա է եղել նաև ԸԸՀ-ի ներկայացուցիչը, որը բացահայտ անգործություն է դրսևորել կատարվող խախտումների նկատմամբ:

- ***31/07 ընտրատեղամասում*** ընտրության գրեթե ողջ ընթացքում տեղամասում ներկա են եղել մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Կարեն Սարիբեկյանի վստահված անձանցից միաժամանակ երկուսը: Ընդ որում, արդյունքները հաշվելու ժամանակ կատարվել է նրանց հերթափոխ: Երկու քաղաքացի, շտապելու պատճառաբանությամբ քվեաթերթիկում համապատասխան նշումը կատարել են առանց քվեախցիկ մտնելու: Ընտրության եկած մեկ քաղաքացու անվան դիմաց ընտրացուցակում եղել է արդեն ստորագրված: Հանձնաժողովի անդամը դա ներկայացրել է որպես թյուրիմացություն: Քաղաքացին առանց ընտրելու լքել է տեղամասը: Ընտրական տեղամասում պարբերաբար նկատվել են կողմնակի անձինք: Հանձնաժողովի անդամները նախնական վիճակահանության համապատասխան չէին փոխվում տեղերով: Մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքները հաշվել են միաժամանակ հանձնաժողովի 3 անդամներ:
- Թիվ ***31/31*** ընտրատեղամասում ՀՅԴ-ի ներկայացուցիչը փորձել է քվեարկել մի գյուղացու փոխարեն՝ պատճառաբանելով, որ նա չի կարողանում տեսնել և չգիտի, թե որտեղ պետք է նշում կատարի:
- Թիվ ***30/32*** ընտրատեղամասում ժամը 16:00 ՄԱԿ-ի վստահված անձը կուսակցության օրացույց է բաժանել ընտրողներին:
- Վանաձորի տնակային ավանի բնակիչներին 4000-ական դրամ են տվել և ուղարկել թիվ ***30/33*** ընտրատեղամաս:
- Տարոնի թաղապետը՝ Դարբինյան Մացակը առավոտը ժամը 8:00-ից մինչև 13:00-ը բակում բացահայտ քարոզչություն է անցկացրել ՀՀԿ-ի օգտին:
- Բազում թաղամասի թաղամասային հիմնարկում հավաքել են բնակիչների անձնագրերը և գումար բաժանել:
- Վանաձորի թիվ 6 դպրոցի շենքի բակում Դաշնակցություն կուսակցությունը 3000-4000 դրամ է բաժանել ընտրողներին:
- 04-39 L և 04-52 L պետհամարանիշի գազելները բնակիչներին Վանաձորի Տավրոս թաղամասից տեղամասեր են տեղափոխել:

<u>Ստեփանավան</u>

- Թիվ 32/33 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը ընտրությունները սկսելուց հետո երկու ժամով բացակայել է ընտրատեղամասից:
- Թիվ 32/33 ԲՀԿ-ի կողմից երկու հոգի փորձել են քարոզչություն անել, սակայն այդ ժամանակ ընտրատարածք են եկել ԵԱՀԿ դիտորդները և, նկատելով նրանց, մարդիկ դադարեցրել են քարոզչությունը:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

- Թիվ 32/33 տեղամասում միաժամանակ գտնվել են ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի, «Դաշինքի», Աժ պատգամավորության թեկնածու Սուրիկ Պողոսյանի կողմից երկու վստահված անձինք, սակայն հանձնաժողովի նախագահը նույնիսկ դիտորդի դիտողությունից հետո դուրս չի հրավիրել նրանց:
- ԵԱՀԿ դիտորդների հետ միասին ընտրատեղամաս է այցելել նաև նույն տարածքում մեծամասնական կարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Սուրիկ Պողոսյանը:

- Թիվ 32/33 ընտրատեղամասում ՀՀԿ-ի վստահված անձը, երբ մարդիկ կատարել են իրենց ընտրությունը, բոլոր «իր ընտրողներին» շնորհակալություն է հայտնել, իսկ ծերերին՝ կոնֆետներ հյուրասիրել:

- Թիվ 32/33 ընտրատեղամասում երկվորյակ եղբայրներից մեկը քվեարկել է 2 անգամ:

<u>Երևան</u>

- 016/01 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամը «օգնել է» քվեարկել ՀՀԿ-ի օգտին:
- 017/01 տեղամասի կողմից սպասարկվող Չարենցի 16 շենքի ցուցակներում ներառվել է քաղաքացի, որը մահացել են 11 տարի առաջ:

- 018/01 ընտրատեղամասի հանձնաժողովի քարտուղարը քարոզչություն է իրականացրել տեղամասի դրսում:
- 026/01 ընտրատեղամասից ժամը 12-00 սահմանում տեղեկություն է ստացվել, որ փորձ է կատարվել կատարել կրկնակի քվեարկություն: Կանխելու փորձերը վերածվել են ծեծկռտուքի, որը շարունակվել է ՀՀԿ ներկայացնող, թիվ 1 ընտրատարծքում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածու Ռուբեն Հայրապետյանի նախընտրական շտաբի դիմաց:
- ժամը 8-30-ի սահմանում ՀՀԿ մի քանի ներկայացուցիչներ Ավան թաղամասի Չարենցի 16-17 շենքերին հարող տարածքում ցուցակներով կանգնեցրել են դեպի մոտակա՝ 010/01 տեղամաս շտապող քաղաքացիներին և ուղղորդելուց բացի նշումներ կատարել իրենց գրպաններում գտնվող ցուցակներում:
- Չարենցի 15 շենքի բակում կանգնած երթուղային տաքսիները առավոտյան ժամը 10-ից մինչև ժամը 14-ը ուղղակի հարկադրանքի ներքո բնակիչներին լցրել են ներս և տարել մոտական տեղամասեր:
- ՀՀԿ գրասենյակի աշխատակցուհիներից մեկը Դուրյան թաղամասի 44 շենքի դիմաց 5000 դրամ է բաժանել տեղամաս գնացող բնակիչներին: Կաշառք բաժանելը կանխվել է:
- Չարենցի 15 շենքի ներքևում գտնվող ՀՀԿ գրասենյակի թվով 11 կանայք 3 թաղամասերի բնակիչներին բաժանել են 5000-ական դրամներ, իսկ մի տեղ տիկինը փորձել էր իրեն պահել գումարի մի մասը և բաժանել 4000-ական դրամներ:

<u>Իջևան</u>

- Թիվ **41/22** ընտրատեղամասում ողջ օրվա ընթացքում կատարվել է բաց քվեարկություն: Կուսակցության ակտիվիստները բացահայտ քարոզչություն են արել իրենց կուսակցության օգտին: Քվեախցերում չի ապահովվել քվեարկության գաղտնիությունը. այլ անձանց համար տեսանելի է եղել ընտրողի քվեարկությունը:
- Թիվ **41/27** ընտրատեղամասում քվեարկության ողջ ընթացքում տեղամասը մարդաշատ է եղել, իսկ քվեարկության սենյակում մարդկանց խմբավորումներ են նկատվել: Դեղին ՌԱՖ մակնիշի 67 LO 923 համարի միկրոավտոբուսով ԲՀԿ-ի շտաբը մարդկանց է բերել քվեարկության: Որոշ կուսակցությունների վստահված անձինք ուղղորդել են այդ խմբավորումները:
- Թիվ **40/36** ընտատեղամասում ներկա են եղել ՀՀկ-ի 2 վստահված անձինք, որից մեկը գյուղապետն է եղել: Մի ծեր կին ցանկացել է ընտրել իր աղջկա հետ: Հանձնաժողովի նախագահը թույլատրել է



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

աղջկան օգնել ծեր կնոջը միայն այն բանից հետո, երբ նա բարձրաձայն հայտարարել է, որ քվեարկելու է ՀՀԿ-ի օգտին: Այս առիթով հանձնաժողովի նախագահը հրաժարվել է ընդունել դիտորդի ներկայացրած արձանագրությունը: Հանձնաժողովի նախագահի տեղակալը ընտրողներին տրվող տեղեկությունների հետ նաև քարոզչություն է կատարել՝ հիշեցնելով համամասնականի 15 և մեծամասնականի 5 համարները: Ինքնուրույն քվեարկել չկարողացող քաղաքացիներին օգնելու պատրվակով քվեարկությունը կատարած անձը մի քանի անգամ մտել է տեղամաս տարբեր ընտրողների հետ: ժամը 20:00-ին տեղամասը իրականում չի փակվել: Ոստիկանության ոմն բարձրաստիճան սպա, կողմնակի անձինք ազատ ելումուտ են արել քվեաթերթիկների հաշվման ընթացքում: Հանձնաժողովի նախագահ Միքայել Վարդանյանը ուսանողներին որպես ընտրակաշառք ճանապարհածախսի կտրոններ է տվել: Բոլոր մեծահասակների հետ, անկախ այն բանից՝ նրանք կարողացել են ինքնուրույն ընտրել, թե ոչ, քվեախցիկ են մտել ՀՀԿ-ի կողմից վստահված մարդիկ:

Հավելված 2

## Քվեարկության արդյունքների խախտումներ

Ստորև ներկայացվող ցուցակներում որոշակի տարբերություն են կազմում գրանցված ընտրողների թիվն ըստ ստորագրությունների և տվյալ տեղամասում օգտագործված ելունդների թիվը:
Սա կարող է վկայել այն մասին, որ տվյալ տեղամաս դրսից քվեաթերթիկներ են բերվել:

**29/27 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների | 849 |
| Օգտագործված ելունդների թիվը | 848 |
| | տարբերությունը 1 |

**29/50 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների | 511 |
| Օգտագործված ելունդների թիվը | 510 |
| | տարբերությունը 1 |

**30/16 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների | 1034 |
| Օգտագործված ելունդների թիվը | 1030 |
| | տարբերությունը 4 |

**31/23 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների | 191 |
| Օգտագործված ելունդների թիվը | 190 |
| | տարբերությունը1 |

**31/27 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների | 1022 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

| | |
|---|---|
| Օգտագործված ելուննների թիվը | 1021 |
| | տարբերությունը1 |

**31/62 ընտրատեղամաս**

| | |
|---|---|
| Գրանցված ընտրողների թիվը` ըստ ստորագրությունների | 1191 |
| Օգտագործված ելուննների թիվը | 1185 |
| | տարբերությունը 6 |

Հավելված 3

## Նախընտրական քարոզչության /2007 ապրիլի 8-ից մայիսի 10-ը/ խախտումներ

Վանաձոր

ԲՀԿ Գ. Լուսավորիչ հասցեի բնակիչների համար կազմակերպել է անվճար իրավաբանական խորհրդատվություն:
ԲՀԿ Տարոն 2 թաղամասում կուսակցության կնիքով փաստաթղթի վրա լրացրել են ընտանիքի անդամների անձնական տվյալները:
ԲՀԿ Տարոն 2 թաղամասում ալյուր է բաժանել, յուրաքանչյուր քաղաքացուէ կես պարկ:
ԲՀԿ Բաղրամյան հասցեում ալյուր է բաժանել:
ԲՀԿ Տարոն 2 հասցեում յուրաքանչյուր 2 ընտանիքին տալիս են 1 մեծ պարկ ալյուր:
ԲՀԿ 1 ավտոբուսով մանկավարժական ինստիտուտի ուսանողներին տարել է Երևան` ռուսական աստղերի համերգի:
ԲՀԿ Գր. Լուսավորիչ հասցեում տեղակայված նախընտրական շտաբից, որի ղեկավարը Ս. Մարգարյանն է, երեկոյան ժամը 22:00-22:30-ն ալյուր են բաժանել:
ԲՀԿ Բաղրամյան հասցեի նախընտրական շտաբին տրամադրված վարսահարդարիչները, հարիչներն ու արդուկները, որոնք որպես ընտրակաշառք պետք է տրվեին քաղաքացիներին, վաճառել են:

ՀՅԴ Տիգրան Մեծի հասցեում անչափահաս երեխաները փողոցում բաժանել են պաստառներ: ՀՀ «Գովազդի մասին» օրենքն արգելում է անչափահասներին օգտագործել գովազդային հոլովակներում:
ՀՅԴ Աղայան փողոցի բնակիչներին 5000 դրամ նախընտրական կաշառք են բաժանել
ՀՅԴ Տարոն 4 թաղամասում միանվագ 7500 դրամ է վճարել սոցիալապես անապահով այն քաղաքացիներին, որոնք զրկվել են ընտանեկան նպաստից:
ՀՅԴ Տարոն 2 թաղամասում Սամվել Մելիքսեթյանը խոստացել է յուրաքանչյուր ձայնի համար վճարել 2000 դրամ: Նրա աշխատակիցներից երկուսն անչափահաս են եղել, որոնք պետք է նշված գումարը ստանալու համար մինչև մայիսի 11-ն առնվազն 50 ձայն ներկայացնեին: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը աշխատելու հնարավորություն է տալիս 16 տարին լրացած և սահմանված կարգով էմանսիպացված քաղաքացիներին, իսկ դեռևս չէմանսիպացված քաղաքացիները կարող են կնքել իրենց օրինական ներկայացուցչի համաձայնության

ՄԱԿ Նախընտրական շտաբում դիմում-խնդրանքներ են հավաքել քաղաքացիներից:
ՀՀԿ Գագի գրասենյակի յուրաքանչյուր աշխատող 10 ստորագրություն և անձնագրի տվյալներ է հավաքել:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

ՀՀԿ Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանը թիվ 15 մանկապարտեզի ծնողների հետ հանդիպմանը խնդրել է ընտրել ՀՀԿ-ին:
ՀՀԿ Լոռու մարզպետը Գուգարքի պոլիկլինիկայում աշխատակիցների հետ հանդիպմանը հորդորել է քվեարկել ՀՀԿ-ի օգտին:
ՀՀԿ 3-րդ մշակույթի պալատում հրավիրվել է համաժողով, որի ընթացքում Վանաձորի քաղաքապետարանի աշխատակից Գրիշա Պառավյանը ակտիվ քարոզչություն է անցկացրել ՀՀԿ-ի օգտին:
ՀՀԿ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում յուրաքանչյուր կուրսից ուսանողներին խմբով պիտի տանեին` ՀՀԿ-ի օգտին քվեարկելու նպատակով:
ՀՀԿ 4-5 միկրոավտոբուսով ծնողներին այցելության է տարել Լեռնային Ղարաբաղի զորամասերում ծառայող իրենց որդիներին:
ՀՀԿ ՕԵԿ-ից առանձին անդամներ ճնշումների հետևանքով դուրս են եկել կուսակցությունից` անդամագրվելով ՀՀԿ-ին:

- Ապրիլի 27-ին Վանաձորի Բազում թաղամասում 10-15 տարեկան 10-13 պատանիներ նախընտրական բուկլետներ ստանալու պատրվակով ներխուժել են Լարիսա Փարեմուզյանի նախընտրական շտաբ և պատռել են 2 պաստառ շտաբի ներսում և դռան արտաքին մասին փակցված պաստառը, այնուհետև դիմել են փախուստի: Դեպքի մասին հայտնվել է Վանաձորի ոստիկանության բաժին:
- «Ժողովրդական կուսակցության» նախագահ Տիգրան Կարապետյանը քաղաքի տարբեր թաղամասերից քաղաքացիներին հանդիպման բերելու համար վարձել է 4 ավտոբուս, իսկ վերադարձի համար յուրաքանչյուր քաղաքացու 100-ական դրամ է տվել: Տիգրան Կարապետյանին քաղաքացիների կողմից տարբեր դիմումներ են ուղղվել:
- Վանաձոր քաղաքի հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, ԲՈՒՀ-երի ուսանողները և աշխատակիցները հատուկ հրահանգով ներկայացել են ՀՀ վարչապետ` Սերժ Սարգսյանի հետ հանդիպման, որի ընթացքում նա հորդորել է քվեարկել Վահրամ Բաղդասարյանի օգտին:
- Վանաձորում մեծամասնական կարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Վահրամ Բաղդասարյանը մարել է համաքաղաքացիների ջրի վարձերը:
- Վանաձոր քաղաքի մսի կոմբինատի շենքում տեղակայված Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբից քաղաքացիներին ձեթ, ջեմ և մակարոն են բաժանել:
- Վահրամ Բաղդասարյանի նախընտրական շտաբի կողմից վերանորոգվել է Վարդանանց 86 շենքի վերելակը /45000 դրամ/

<u>Սպիտակ</u>

ԲՀԿ Ջրաշեն գյուղում ԲՀԿ-ի կողմից բաժանվել է գարի` մեկ կգ-ը 20 դրամով:
ԲՀԿ Գյուղերում պարարտանյութ է վաճառվել` մեկ պարկը 3700 դրամով/շուկայական արժեքը 4500 դրամ է/:

ՀՀԿ Թիվ 7 դպրոցում անձնագրեր են հավաքել և ընտրողին առաջարկել 7000-10000 դրամ, որը ընտրողը կարող է վերցնել և չմասնակցել քվեարկությանը:
ՀՀԿ Շիրակամուտ և Արևաշող գյուղերում գյուղացիներին սպառնացել են, որ եթե չքվեարկեն ՀՀԿ-ի օգտին, ապա կզրկվեն կիսակառույց տներից:

ՀՅԴ Սոցիալապես անապահով բնակիչներին միանվագ 10 հազ. դրամ է բաժանել` որպես նպաստ:

- ՕԵԿ նախընտրական հանդիպումներն անց են կացվել թաղամասերում և բակերում: Շտաբի պետի հավաստմամբ` Սպիտակի ավագանու որոշմամբ իրենց թեկնածուներին թույլ չեն տվել



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

նախընտրական հանդիպումներ անցկացնել քաղաքի կենտրոնական հրապարակներում:

- Թիվ 29 տեղամասում մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանը «Պազ» մակնիշի ավտոբուս է նվիրել Լեռնապատ գյուղին:
- Արկադի Համբարձումյանը Արջուտ գյուղին 4.000 ԱՄՆ դոլար է նվիրել՝ գյուղի գազաֆիկացման համար:
- Արկադի Համբարձումյանը համակարգիչ ու տրակտոր է նվիրել Բազումի գյուղապետարանին:

<u>Ստեփանավան</u>

ԲՀԿ Քաղաքացիները նախընտրական շտաբ են դիմել առողջապահական, սոցիալական հարցերով: Այդ հարցերը լուծվել են «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի միջոցով:

- Մայիսի 11-ին, ժամը 17:00-ից սկսած մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու Սուրիկ Պողոսյանը ամբողջ Ստեփանավանի տարածքում բաժանել է 3000-ական դրամ ընտրակաշառք:

<u>Ալավերդի</u>

ՀՀԿ ACP գործարանի տնօրենը բացահայտ հրահանգել է քվեարկել ՀՀԿ-ի օգտին: Քաղաքում բոլոր երթուղային միկրոավտոբուսների և ավտոբուսների վրա ԱԺ պատգամավորության թեկնածու Կարեն Սարիբեկյանի նկարներն են փակցված եղել:

ՀՀԿ նախընտրական շտաբի ղեկավարը փոխքաղաքապետ Արտավազդ Վարոսյանն է եղել:

ՀՀԿ Ախթալայի «Մեթլ-Փրինց» գործարանի տնօրենը հայտնել է, որ աշխատակիցների աշխատավարձերը չի վճարի՝ ՀՀԿ-ի օգտին չքվեարկելու դեպքում:

ՀՀԿ Ալավերդու պետական քոլեջի տնօրենը յուրաքանչյուր ուսանողից 10 անձի անձնագրային տվյալներ է հավաքել:

ՀՀԿ «Հայկական երկաթուղի» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Խրիմյանի կողմից հրահանգվել է բոլոր ենթակա ծեռնարկությունների տնօրեններին ներկայացնելու աշխատողների թվաքանակ՝ ստիպելով նրանց քվեարկել ՀՀԿ-ի օգտին:

- Քաղաքում բոլոր երթուղային միկրոավտոբուսների և ավտոբուսների վրա փակցված են եղել միայն նույն ըֆտրատարածքում մեծամասնական կարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Կարեն Սարիբեկյանի պաստառները:
- Կարեն Սարիբեկյանը ծննդատանը արկղերով նվերներ է բաժանել, խոստացել է վճարել 5 հիվանդների վիրահատության գումարը:
- Ազգային Միաբանություն կուսակցության պաստառները հաճախ պատռվել են փակցված տեղերից, որի կապակցությամբ կուսակցության տարածքային կազմակերպության նախագահը դիմել է ոստիկանության բաժնի պետին:

<u>Տաշիր</u>

ՀՀԿ «Տաշիրք» հեռուստատեսությունը եթեր չի տրամադրել ԲՀԿ-ին՝ պատճառաբանելով, որ հանրապետականները կբարկանան:

ԲՀԿ 2 բեռնատար ավտոմեքենաներով գյուղացիներին սելիտրա /պարարտանյութ/ են բաժանել:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Իջևան

- «**Իմպիչմենտի**» շտաբի հաղորդած տեղեկատվությամբ՝ նախընտրական քարոզչությունը քաղաքում իրականացվել է «տուն առ տուն» սկզբունքով: Դպրոցներում և համալսարաններում նախընտրական հանդիպումներն արգելվել են:
- ԱԺ թեկնածու Հակոբ Հակոբյանի շտաբի պետը Դանիել Մնացականյանի հավաստմամբ վարչական լծակներն օգտագործվել են ՀՀԿ-ի օգտին: Մասնավորապես, ահաբեկված են եղել մարզպետարանի աշխատակիցները՝ վախենալով կորցնել աշխատանքը:
- Մերժվել է թեկնածուի հանդիպումը էլցանցի աշխատողների հետ: Էլցանցի տնօրեն Ալբերտ Ղալթաղչյանը հայտնել է, որ ղեկավարությունից ոչ մի թեկածուի հետ հանդիպում չկազմակերպելու հրահանգ ունի:

Գյումրի

- ՕԵԿ-ի աշխատակիցները նախընտրական պաստառներ պատրաստելու համար դիմել են համապատասխան ֆիրմայի, սակայն վերջինս հայտնել է, որ բոլոր տեղերը զբաղեցված են ՀՀԿ-ի պատվերով:
- 35-րդ ընտրատարածքի ընտրատարածքային հանձնաժողովի նախագահը «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչ է եղել, որին ստիպողաբար հեռացրել են նախագահի պարտականություններից:
- Դատարանի կողմից նշանակված տեղամասային հանձնաժողովի բոլոր անդամները եղել են ԲՀԿ-ի անդամներ:
- ՀՅԴ -ի շտաբի ներկայացուցիչը հայտնել է, որ ԲՀԿ-ի և ՀՀԿ-ի այցից առաջ Գյումրի քաղաքի մուտքի մոտ՝ Երևանից Գյումրի ուղղությամբ ցած է գցվել ՀՅԴ-ի գովազդների վահանակը:
- ՀՅԴ-ի շտաբի պետ Առաքել Առաքելյանի հավաստմամբ Մարտիրոս գյուղում գյուղապետը արգելել է պաստառներ փակցնելը:
- Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը, բացի ՀՀԿ-ից, մնացած կուսակցություններին չի թույլատրել նախընտրական հանդիպումներ ունենալ քաղաքի դպրոցների դահլիճներում:

Հավելված 4

## Հանրապետական տպագիր մամուլի դիտարկման արդյունքներ

- ***10-11.04.2007«168 ժամ» Լիլիթ Սեյրանյան «Նախընտրական «իրավառություն» էջմիածնում»***

Շաբաթ օրը ժամը 00:30-ի սահմաններում անհայտ անձինք կրակահերթ են բացել թիվ 19 ընտրատարածքում առաջադրված ԱԺ պատգամավոր Հ.Հակոբյանի վրա, իսկ 4:30-ի սահմաններում այրել են նույն ընտրատարածքում առաջադրված Ա.Հարությունյանի շտաբը:

- ***10.04.2007«Առավոտ» Սեփ.լր «Մեծ դահլիճ և գովազդի տեղ չեն տալիս»***

ՕԵԿ-ի նախագահ Ա. Բաղդասարյանը ապրիլի 7-ին և 8-ին հահանդիպումներ է ունեցել Լոռու և Արագածոտնի մարզերում, և մասնավորապես Վանաձորում, Սպիտակում, Ալավերդիում, Աշտարակում: Վանաձորի քաղաքային իշխանությունները հրաժարվել են տրամադրել Շ.Ազնավուրի անվան դահլիճը, իսկ երաժշտական ուսումնարանի 350 տեղանոց դահլիճում տեղավորվել է շուրջ 500 հոգի: Սպիտակի քաղաքապետարանը ևս հրաժարվել է մեծ դահլիճ տրամադրել, իսկ փոքր դահլիճը տրամադրել է 100.000 դրամ վարձավճարով: ՕԵԿ-ի ներկայացուցիչներին թե՛ Սպիտակում, թե՛ Վանաձորում տեղեր չեն տրամադրել արտաքին քաղաքական գովազդի համար, չնայած որ ողջ մարզը հեղեղված է ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի պաստառներով:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

- ***11.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «Ձայն են գնում»***

«Ա1+»-ի հաղորդմամբ՝ ապրիլի 9-ին Նոր Նորքի 9-րդ զանգվածի 17 շենքի բնակիչներին այցելել են ՄԱԿ-ի ներկայացուցիչները, որոնք առաջարկել են 5000 դրամ՝ ՄԱԿ-ին իրենց քվեն տալու համար: Բնակիչներին այցելել են նաև ՀՀԿ-ից, բայց գումարի չափը խոստացել են տեղեկացնել մոտ օրերին: Ընդդիմադիր ուժերի կոորդինատոր Ա.Պետրոսյանը նշել է, որ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն տեղավորվել են գյուղերի երևացող մասերում, իսկ ընդդիմադիրները միայն Գործկոմի խարխուլ շենքում:

- ***12.04.2007. «Առավոտ» Գրիշա Բալասանյան «Վարսահարդարիչ ձայնի դիմաց»***

Վարդենիսում ԲՀԿ-ն իր գաղափարախոսությունները տարածելուց բացի նաև նվերներ է բաժանել: Նրանք Ակունք, Լուսակերտ գյուղերում բազմազավակ ընտանիքներին վարսահարդարիչներ են նվիրել և պատրաստվում են շուկայականից 1300 դրամ էժան՝ 3500 դրամով պարարտանյութ վաճառել: «Նոր ժամանակներ» կուսակցության տարածքային կազմակերպության նախագահ Ս.Խլոյանը հայտնել է, որ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՄԱԿ-ը ժողովրդին գումար են բաժանում: ԲՀԿ-ին ձայն տալու համար բաժանում են 15000 դրամ, իսկ 100 դոլլար մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուին ձայն տալու համար:

- ***12.04.2007. «Առավոտ» Ն.Մ « ՀՀԿ- ԲՀԿ. Ծեծկռտուք »***

Ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության Արթիկի բաժին հայտարարություն է տվել Վ.Մանուկյանը, որ իրեն և իր ընկերոջը /երկուսն էլ 36 ընտրատարածքում առաջադրված անկուսակցական թեկնածու Մ.Վարագյանի շտաբի ներկայացուցիչներ են/ ծեծի են ենթարկել Կ.Պետրոսյանը /նույն ընտրատարածքում ԲՀԿ-ական թեկնածու Ս.Պետրոսյանի եղբայրը/, Հ.Հակոբյանը, Բ.Պետրոսյանը, Զ.Համասյանը և ևս 5 անծանոթներ /բոլորն էլ ԲՀԿ թեկնածուի թիմակիցներն են/, որի հետևանքով Ս.Պետրոսյանը և Վ.Մանուկյանը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Նույն օրը ոստիկանությանը գրավոր հայտարարությամբ տեղեկացրել են, որ ԲՀԿ-ի թեկնածու Ս.Պետրոսյանի նախընտրական շտաբում փակցված պաստառները Ս.Պողոսյանը պատառոտել է, իսկ երբ գրասենյակի մարդիկ փորձել են կարգի հրավիրել նրան, վերջինս խուլիգանական վարքագիծ է դրսևորել:

- ***13.04.2007 «Հայաստանի Հանրապետություն» Արմենպրես «Պայթեցվել են ԲՀԿ-ի 2 գրասենյակները»***

Ապրիլի 12-ի գիշերը Երևանի Քանաքեռ- Զեյթուն և Ավան համայնքում անհայտ անձինք պայթեցրել են ԲՀԿ-ի գրասենյակները:

- ***14.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «Հանդիպումները փաստորեն արգելված են»***

Աժ պատգամավոր Վ.Դալլաքյանի աշխատակազմի ներկայացուցիչ Գ.Ռաֆաելյանը հայտնել է, որ իրենք զանգահարել են Վանաձորի ավտոդպրոցի, նաև թիվ 2, թիվ 6, թիվ 8, թիվ 9, թիվ 18, թիվ 19 դպրոցների տնօրեններին՝ պայմանավորվելու համար, որ իրենց հարմար ժամանակ Վ.Դալլաքյանի հանդիպումները կազմակերպվեն, սակայն բոլորը մերժել են: Նրանք պատասխանել են.«Մարզպետին ասեք, որ թողնի»: Մինչդեռ 30 ընտրատարածքի մյուս թեկնածուն այդ բոլոր դպրոցներում հանդիպումներ է ունեցել՝ մինչև քարոզարշավի սկիզբը և նվերներ բաժանել:

- ***14.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «ԲՀԿ-ն խախտել է օրենքը, իսկ ՀՀԿ-ն…»***

ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը լույս է տեսել 5000 տպաքանակով, իսկ ծրագիրը և ՀՀԿ-ի պատմությունը համառոտ ներկայացնող բրոշյուրը՝ 10.000-ով: ՀՀԿ-ի համեմատությամբ ՄԱԿ-ը նման բրոշյուր տպել է 50.000 տպաքանակով, իսկ ՀԺԿ-ն 30.000-ով: Նույնը վերաբերվում է ԲՀԿ-ին, որը «Գյուղի վերածնունդ» բուկլետը տպագրվել է 1000 օրինակով, իսկ հիմնական բուկլետը 5000 օրինակով: Իսկ ԲՀԿ-ի մեծամասնականով առաջադրված թեկնածուների մասին պատմող քարոզչական նյութի վրա ընդհանրապես նշված չէ դրանց տպաքանակը և տպարանը, ինչը օրենքի խախտում է:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

- *14.04.2007 «Հայկական ժամանակ» սեփ.լր. «Ծեծել են տղամարդավարի»*

Թիվ 19 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու գրանցված գեներալ Ս.Սարոյանի կողմնակից մի քանի կանայք օրերս ծեծել են ԱԺ պատգամավոր Հ.Հակոբյանի կողմնակիցներին, սակայն այս առիթով քրեական գործ չի հարուցվել:

- *17.04.2007 «Առավոտ» սեփ. լր. «Ոստիկանները միջամտում են ընտրություններին»*

ՕԵԿ-ի փոխնախագահ Հ .Բիշարյանից «Առավոտին» փոխանցեց հերթական ահազանգը, որի համաձայն` Երևանի 15 և 16 թաղամասերի շենքի բնակարաններ են մտնում ոստիկանները և պնդում, պարտադրում, որ անդամագրվեն և ընտրեն ՀՀԿ-ին:

- *17.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «Վրաերթ՝ թեկնածուի ամուսնու վրա»*

Ապրիլի 14-ի լույս 15-ի գիշերը Չարենցի փողոցում վրաերթի հետևանքով մահացել է Դավիթ Լազարյանը, որը ՀԱԿ-ի համամասնական ցուցակի 3-րդ տեղում գտնվող Ժասմեն Ասրյանի ամուսինն է:

- *18.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «Քարոզարշավի հավասարության խախտումներ»*

ՕԵԿ-ի նախագահ Ա.Բաղդասարյանը ճեպազրույցում հայտնել է, որ Երևանում գովազդային մեծ վահանակները տրամադրվում են իշխանական կուսակցություններին:
Մինչդեռ ՕԵԿ-ը, ըստ Ա.Բաղդասարյանի, դիմել է և ստացել «տեղ չկա» հիմնավորումը: Վանաձորի հանրապետական քաղաքապետը նույնպես մերժել է տեղ տրամադրել Ա.Բաղդասարյանի նկարը փակցնելու համար, իսկ Երևանի Մետաքսի թաղամասում արգելել են ՕԵԿ-ի փախնախագահ Մ.Շահգելդյանի քարոզչական հանդիպումը:

- *19.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «5 քրեական գործ մի շաբաթում»*

Գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանը ապրիլի 18-ին Վանաձորում լրագրողներին հայտնել է, որ ընտրարշավի ժամանակ արձանագրված օրինախախտումների փաստերով հարուցվել է 5 քրեական գործ, ևս 2-ը նախաքննության փուլում են: Ի դեպ, այս 5-ից 2-ը Երևանում ԲՀԿ-ի գրասենյակները պայթեցնելու փաստով գործերն են, մեկը` Արմավիրի մարզում Ս.Ղազարյանին առևանգելու դեպքի առիթով պատգամավորության` արդեն նախկին թեկնածու Հ.Հակոբյանի դեմ հարուցվածը, իսկ 2-ը հարուցվել են Շիրակում և Վայոց Ձորում: Իսկ Գյումրիի քաղաքապետի դեմ կատարված մահափորձի` ընտրական գործընթացների հետ ունեցած առնչությունն առայժմ ապացուցված չէ:

- *19-20. 04.2007 «168 ժամ» սեփ.լր. «Տհաճ միջադեպ»*

Ապրիլի 18-ին «Ժառանգություն» կուսակցությունը իր քարոզարշավը շարունակել է Վայոց Ձորում և Սյունիքում: Քարոզարշավի ընթացքում տհաճ միջադեպ է գրանցվել. գյուղապետը հայտնել է, որ ոչ ոք իրավունք չունի այնտեղ քարոզարշավ իրականացնել, առանց իրեն 5 օր առաջ տեղյակ պահելու, քանի որ գյուղի տերը ինքն է:

- *20.04.2007 «Առավոտ» Գ.Բալասանյան «Բացեիբաց ընտրակաշառք է տալիս»*

Ապրիլի 19-ին, երբ ԺՈՒԿ-ը այցելել էր Էջմիածնի Աղավնատուն գյուղ, քաղաքական գործիչների հետ հանդիպման եկած բնակիչներից մեկը մոտեցել է Մ. Գասպարյանին և օգնություն խնդրել: Նա գրպանից հանել է 5000 դրամ և առաջարկել կնոջը, կինը մերժել է, ասելով, որ ինքը մի 20.000-ի ակնկալիք ուներ, իսկ Մանուկ Գասպարյանը 5000-ից ավելի չի առաջարկել:

- *20.04.2007 «Առավոտ» սեփ.լր. «Անձնագրեր հավաքելու ևս մեկ դեպք»*

Թիվ 14 ընտրատարածքի ընտրողներից մեկը «Առավոտին» հայտնեց, որ Արագածոտնի մարզում ՕԵԿ-ի նախկին պատասխանատու Հ.Խաչատրյանը սկսել է իր օգնականներով անձնագրեր հավաքել հօգուտ քաղաքացիական նախաձեռնությամբ ԱԺ պատգամավորության թեկնածու առաջադրված Լ.Խաչատրյանի:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

- ***21.04.2007 «Առավոտ» Սեփ. լր. «Քաջարանում խոչընդոտել են ՕԵԿ-ին»***

Ապրիլի 20-ին ՕԵԿ-ի ղեկավարներից Միեր Շահգելդյանին Քաջարանում դահլիճ չեն տրամադրել, իսկ Քաջարանի կոմբինատի տնօրեն Մ. Հակոբյանը մարդկանց արգելել է հանդիպմանը մասնակել:

- ***02. 05. 2007 «Հայկական ժամանակ» սեփ. լր. «Հանել ԺԿ-ն»***

Եթե ԿԸՀ-ն առաջնորդվի ԸՕ-ի պահանջներով, ապա այօր կարող է որոշել դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Ժողովրդական կուսակցության գրանցումը ուժը կորցրած ճանաչելու համար, քանի որ կուսակցության նախագահ Տ. Կարապետյանը արդեն սկսել է հեռուստատեսությամբ բացահայտ քարոզել իր կողմից ընտրակաշառք բաժանելու փաստը:

- ***03. 05. 2007 «Առավոտ» Մարգարիտ Եսայան «Ախպերության դեմ ելույթի համար»***

Ապրիլ 1-ին թիվ 31 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Լ. Փարեմուզյանին Գուգարք գյուղում հանդիպել են 3 հարբած տղամարդ և պահանջել նրան գյուղ չմտնել և հեռանալ ծորի ճանապարհով: Նրանցից մեկը՝ Լ. Փարեմուզյանի մրցակից Կ. Սարիբեկյանի հիմնարկում աշխատող էլեկտրիկ Վ. Միկիչյանը, հայտնել է, որ «ախպերության» դեմ է ելույթ ունենում, իսկ մյուսը՝ Վարդգես Միկիչյանը, ասել է, որ գյուղը իրենց «զոնան» է:

- ***«Առավոտ» Ըստ «E-channel» -ի «Ինչպես լցրեց»***

Մայիսի 2-ին առավոտից հոսքը չէր դադարում դեպի էջմիածնի հրապարակ: Փակ էին դպրոցները, մանկապարտեզները, հանրախանութները, շուկան: Բոլորին կարգադրված էր առավոտից լինել հրապարակում, հակառակ դեպքում կարող էին հեռացվել աշխատանքից: Երբ Ս. Սարգսյանը այցելեց էջմիածին, մարդիկ երեք ժամ ոտքի վրա կանգնած սպասում էին:

- ***05.05.2007 «Հայական ժամանակ» սեփ.լր. «Սերժի գերիները»***

ՀՀԿ-ն իր նախընտրական հավաքներին «դահլիճները լցնելու» ու «բազմահազարանոց» հանրահավաքներ կազմակերպելու նոր միջոց է գտել: Մայիսի 4-ին Մալաթիա-Սեբաստիա համայնքում ՀՀԿ նախընտրական հանրահավաքը «լցնելու» համար հանդիպումից մեկ ժամ առաջ փակել են «Մալաթիա» տոնավաճառը՝ պատանդ թողնելով տոնավաճառի վաճառողներին:

- ***05.05.2007 «Հայական ժամանակ» սեփ.լր. «Հերթական անօրինությունները»***

Ապրիլի 4-ին ԱԺ պատգամավոր, Վանաձորի թիվ 30 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Վ.Ղալլաքյանը նամակով դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ ոստիկանության ծառայության պետին, Լոռու մարզի դատախազ Ա.Ղազարյանին և Լոռու մարզային ոստիկանության վարչության պետ Ժ.Գրիգորյանին՝ հայտնելով, որ քարոզարշավի ընթացքում իր հանդիպումները քաղաքացիների հետ ընդմիջվում են հարբած կանանց և տղամարդկանց կողմից դիտավորյալ անձնական վիրավորանքներ հասցնելով:

- ***05.05.2007 «Առավոտ» սեփ.լր. «Դաշնակցականները ծեծել են հանրապետականներին»***

Մայիսի 4-ին Կենտրոն համայնքի թիվ 9 ընտրատարածքի տեղամասային հանձնաժողովների դաշնակցական որոշ անդամներ ծեծի են ենթարկել Կենտրոն համայնքի ղեկավար Գ.Բեգլարյանի կողմնակիցներին, որոնք փորձել են «գնելու առաջարկ անել հանձնաժողովներում ՀՅԴ-ի ներկայացուցիչներին:

- ***5-7.05.2007 «168 ժամ» սեփ.լր. «Ծեծել են Շ.Պետրոսյանին»***

Մայիսի 3-ի երեկոյան ՀՀՇ կուսակցության անդամ, Հայաստանի ավիացիայի վարչության նախկին պետ Շ.Պետրոսյանը, «Ստոպ» ակումբում իր մտերիմների հետ զրույցում ասել է, որ ավելի լավ կլիներ, որ Գ.Ծառուկյանի լուսանկարը փակցնեին Օպերայի շենքի ճակատին, սակայն նրա մասին խոսելիս դիմել է մականունով: Դրանից հետո նրան են մոտեցել մի քանի սափրագլուխներ և ստիպել դուրս գալ ակումբից, սակայն մերժել է, որից հետո նրան առևանգել են և դաժան ծեծի ենթարկել:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

- *09.05.2007 «Առավոտ» սեփ.լր. «Թեկնածուի գովքը քաղաքապետերն են արել»*

Մայիսի 7-ին Շիրակի մարզի թիվ 36 ընտրատարածքը ներառող Մարալիկ քաղաքի մշակույթի տանը նախընտրական հանդիպումներ է ունեցել մեծամասնականով առաջադրված Մ.Վարագյանը:
Նրա շքախմբում էին նաև Մարալիկի քաղաքապետ Ա.Գևորգյանը, Արթիկի քաղաքապետ Հ.Աբրահամյանը, նաև մարզային արտակարգ իրավիճակների ու «Ջրմուղկոյուղու» պետերը:

- *10.05.2004 «Առավոտ» սեփ.լր. «Ալրաղացը՝ Դավիթաշենում»*

ՀՀԿ-ի թեկնածու թիվ 5 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Լ.Սարգսյանը լայնորեն քարոզում է Դավիթաշենի բոլոր դպրոցներում, ուսուցչական կոլեկտիվներում, մանկապարտեզներում և այլն:
Դեռևս մարտ ամսից սկսած նա մանկապարտեզի աշխատողներին թեյնիկներ է բաժանել, իսկ դպրոցի աշխատողներին՝ արդուկներ:

- *10. 04. 2007«Հայք» սեփ.լր «ԲՀԿ-ի 15 հազարական նվերները»*

ԲՀԿ-ն, բացի մայրության տոնի կապակցությամբ բազմազավակ ընտանիքներին վարսահարդարիչ և արդուկ նվիրելուց, Արարատի մարզի մի շարք գյուղերի գյուղապետերին առաջարկել է 10-15 հազարական ԱՄՆ դոլար՝ այդ գյուղերում ծայների կեսն իր համար ապահովելու համար, սակայն գյուղապետերից ոմանք ՀՅԴ անդամներ են, և հրաժարվել են նման նվերից:

- *13.04.2007 «Ժամանակ Երևան» սեփ.լր. «Կհաղթեն միայն կեղծիքով»*

Լոռու մարզի մի քանի գյուղապետերի ընտության ժամանակ կրած խայտառակ պարտությունից հետո հանրապետականը ու իր մարզպետ Ա. Քոչարյանը շատ «ուսանելի» հետևություն է արել՝ այլևս թույլ չտալ, որ իրենց թեկնածուի հետ որևէ մեկը առաջադրվի: Նրանք ոստիկանության, մարզպետարանի, տարբեր այլ լծակների միջոցով ստիպում են, որ մյուս բոլոր թեկնածուները հանեն իրենց թեկնածությունները և Հանրապետականի ներկայացուցիչներն այլընտրանք չունենա: Այս ամենը մեծ դժգոհություն է առաջացրել Լոռու մարզում և բնակչությունը վստահ է, որ եթե մաքուր ընտրություններ լինեն ՀՀԿ-ն ամենաշատը 4-ից 5-րդ տեղը կզբաղեցնի:

- *17.04.2007 «Հայք» սեփ.լր. «Զգույշ, արգելված է»*

Աբովյան քաղաքում, որը հայտնի է որպես ԲՀԿ նախագահի Գ. Ծառուկյանի սեփական «բոստանը», արգելված է որևէ կուսակցության նախընտրական պաստառ փակցնելը, հակառակ դեպքում այն մի քանի րոպե անց վերացվում է: Իսկ Արաբկիրի այն հատվածում, որտեղ բնակվում է ԲՀԿ-ական Հ.Հայրապետյանը, ոչնչացվում են նրա բոլոր մրցակիցների պաստառները: Նրա մրցակիցների ցուցապաստառները հազվադեպ երևույթ են նաև «Հայաստան» հանրախանութի շրջակայքում:

- *19.04.2007 «Հայք» սեփ. լր. «Արգելում են»*

Ապրիլի 18-ին ԱԺ պատգամավոր Վ.Դալլաքյանը պետք է հանդիպում ունենար Վանաձորի թիվ 11 դպրոցում, սակայն առավոտյան շտաբի աշխատակից Գ.Ռաֆայելյանին է զանգահարել մի երիտասարդ և, ներկայանալով տեղի ՀՀԿ գրասենյակի աշխատակից, ասել է, որ իրենք արգելում են հանդիպումը: Հետաքրքիրն այն է, որ թիվ 11 դպրոցի տնօրենը թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Մ.Սայադյանի կինն է:

- *19.04.2007 «Հայք» սեփ.լր. «Նախընտրական ծվարշավ»*

Նոր Նորքի թիվ 2 ընտրատարածքում առաջադրված, ՀՀԿ անդամ Ռ.Պետրոսյանի կողմնակիցները Նորքի 8-րդ և 9-րդ զանգվածների բնակիչներին բաժանում են ընտրակաշառք՝ 10 հատ ձու և 30.000 դրամ: Ի դեպ, մի քանի օր առաջ անհայտ անձինք նույն ընտրատարածքում գողացել և վաճառել են ՕԵԿ-ից առաջադրված Ս.Ֆարմանյանի քարոզչական պաստառը, սակայն քրեական գործ չի հարուցվել:



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

- *21.04. 2007 «Հայք» սեփ.լր. «ՀՀԿ-ն անձնագրեր է սիրում»*

Ըստ Ալրացիա և Չարբախի թաղամասերի բնակիչների՝ համատիրությունները հավաքում են անձնագրերըև խոստանում գումար ՀՀԿ-ին քվեարկելու համար: Նման լուրեր ստացվել են նաև Լ. Քալաշյանի անվան Հայկական Բաց Համալսարանի ուսանողների կողմից: Ուսանողներից պահանջել են անձնագրերըև ստիպել անդամագրվել ՀՀԿ-ին, իսկ որոշ ուսանողներ հրաժարվում են դասի գնալ, որովհետև չեն ցանկանում անդամագրվել ՀՀԿ-ին:

- *21.04.2007 «Քաղաքացիական նախաձեռնություն» սեփ.լր. «Դաշինքի»-ի Վանաձորի թեկնածուին խոչընդոտել են մտնել դպրոց»*

Վանաձորի պատգամավորության թեկնածու Կ. Ղարաքեշիշյանը, որն առաջադրվել է թիվ 31 ընտրատարածքում, արդեն հասկացել է, որ նախընտրական քարոզչությունը անցնում է խախտումներով: Մի քանի օր առաջ նա դիմել է 25-րդ դպրոցի տնօրեն Ռ. Քոչինյանին, որպեսզի հանդիպում կազմակերպվի, սակայն մերժում է ստացել: Դպրոցի տնօրենը մարզպետարան կրթության բաժնից թույլտվության «թուղթ» է պահանջել, սակայն ըստ Ղարաքեշիշյանի մարզպետարանը նման բան չի պահանջել: Տնօրենի հետ հաջորդ հանդիպման ժամանակ իմացել է, որ դպրոցում մի քանի օր առաջ հանդիպում է ունեցել Կ. Սարիբեկյանը: Տնօրենը հայտնել է, որ դա իրեն վերևից է ասված:

- *25.04.2007 «Հայք» սեփ.լր. «Խանգարում են»*

Թիվ 30 ընտրատարածքում հիմնական հակառակորդներն են՝ ՀՀ դլխավոր դատախազի հովանավորյալ Վ. Բաղդասարյանը, և անկուսակցական Վ.Դալլաքյանը: Վ. Բաղդասարյանը փորձել է ամեն կերպ խոչընդոտել իր մրցակից թեկնածուին: Նա մարդիկ է ուղարկել Դալլաքյանի հանդիպումներին՝ դրանք խանգարելու նպատակով: Դալլաքյանը, սակայն, առայժմ չի տրվում սադրանքներին:

- *25.04.2007 «Հայք» սեփ.լր. «Խանգարում են ժառանգությանը»*

Ըստ կուսակցության տարածած հաղորդագրության՝ ապրիլի 20-ին, Ավանում չորս անհայտ անձինք մոտեցել են կուսակցության բրոշյուրները բաժանող ուսանողուհիներին և կոպիտ հրմշտոցով առգրավել է 300 բրոշյուր:

- *27.04.2007«Հայք» սեփ.լր. «Ընտրակաշառք՝ օրը ցերեկով»*

Ապրիլի 26-ին Երևանի Խանջյան փողոցում՝ մանկավարժական համալսարանի հարևանությամբ ԲՀԿ-ն բացահայտորեն ընտրակաշառք էր հրամցնում: ԲՀԿ ավտոբուսով ուսանողներին անվճար տեղափոխում է: Այս փաստը վրիպում է ինչպես ԿԸՀ-ի, այնպես էլ իրավապահների աչքից: ԲՀԿ-ականները բացատրում են, որ դա բարեգործություն է, սակայն բարեգործության մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ ավտոբուսի վրա փակցված է եղել ԲՀԿ-ի խորհրդանիշը: Այլ կերպ ասած՝ ուսանողներին տեղեկացվում է, որ իրենց անվճար ծառայություն է մատուցում ԲՀԿ-ն:

- *27.04.2007 «Հայք» սեփ.լր. «Հրահանգ գյուղապետերին»*

Հավաստի աղբյուրների համաձայն՝ ՀՀԿ-ական մարզպետները գյուղապետներին հրահանգել են ավելի կոշտ լինել մրցակից կուսակցությունների նկատմամբ և գյուղի ժողովրդին արգելել հանդիպման դուրս գալ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:
Բացի այդ, գյուղապետերին հստակ ասվել է, որ եթե ՀՀԿ-ի օգտին «քվեարկի» գյուղի բնակչության 2/3-ից պակասը, ապա նրանք ստիպված կլինեն այլ աշխատանք փնտրել:

- *28. 04. 2007 «Հայք» Ա.Գ. «Սպանություն Վանաձորում»*

Ապրիլի 27-ին ատրճանակից ու սուր ծակող գործիքից ստացած վնասվածքի հետևանքով մահացել է Հրանտ Հակոբյանը, որը թիվ 30 ընտրատարածքում առաջադրված Վ. Դալլաքյանի կողմնակիցներից էր:
Հրանտ Հակոբյանը նախօրեին հանդիպում է ունեցել նույն ընտրատարածքում առաջադրված Վ.



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

Բաղդասարյանի հետ: Հանդիպումից հետո Բաղդասարյանի կողմնակիցները Ս. Դիլոյանի ղեկավարությամբ, որը Վ. Բաղդասարյանի շտաբի անդամ է, և Վանաձորի ավագանու անդամ, սկսել են վիճել, որից հետո «ռազբորկայի համար» հրավիրել են Գուգարքի շրջանի Թեժ լեռ կոչվող տարածքը, որտեղ և կրակել են նրան վրա և դանակով 10 հարված հասցրել:
Այս դեպքն ունի հստակ քաղաքական ենթատեքստ: Սակայն Վ. Բաղդասարյանը ամեն կերպ ցանկանում է կոծկել այս միջադեպը: Նշել է, որ առաջին անգամ է լսում, որ իրենց միջև հակասություններ կան, որը կարող է նույնիսկ սպանության վերածվել: Նա չի բացառել, որ վիճաբանությունը կարող է առաջացած լինել Վ. Դալլաքյանի և իր ընտրողների միջև, որոնք միմյանց հետ անձնական խնդիրներ են ունեցել և դրանց քաղաքական ենթատեքստ տալ պետք չէ:

- ***4.05.2007 «Ժամանակ Երևան», Սեփ. լր . «Ընտրակաշառքների մրցույթ»***

ՀՅԴ-ի ներկայացուցիչները Աշտարակի Փարպի գյուղում ծրարներ են բաժանել մարդկանց, որոնց մեջ եղել է հինգ հազարական դրամներ: Գյուղացիներից մեկը ասել է, որ իրենք կարծել են, որ դրանք ծանուցման համար տրվող ծրարներ են, սակայն բացելուց հետո տեսել են, որ ՀՅԴ-ի բուկլետների հետ միասին հինգ հազար դրամ է դրված եղել ծրարներում: Իսկ Տաշիրում ՀՀԿ-ն բնակիչներին գյուղատնտեսական պարագաներից սկսած, մինչև անգամ սառնարաններ է բաժանել: Փաստորեն՝ քաղաքական ուժերի մրցակցության դաշտը գաղափարականից տեղափոխվել է այլ հարթություն և վերջիններս մրցակցում են ըստ ընտրակաշառքների չափի:

- ***4.05.2007«Ժամանակ Երևան», Սեփ. լր. «Միայն ծափահարել»***

Անցած շաբաթ Լոռվա մարզի Թումանյանի շրջանում Հայկական Երկաթուղիներ ընկերության ղեկավար Ա. Խրիմյանը բնակիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ եթե ՀՀԿ-ն շատ ձայներ չհավաքի և չմտնի խորհրդարան, ապա երկաթգիծը կփակվի: Իսկ հանրահավաքի կազմակերպիչները մարդկանց հրահանգել են, որ հանկարծ մասնակիցներից ոչ ոք չփորձի հարց տալ ՀՀԿ-ին: Պահանջել են, որ վերջում միայն ծափահարեն:

- ***4.05.2007 «Հայք», Սեփ.լր. «Ինչ ժլատ են կան աղքատ»***

Ըստ «Հայք» օրաթերթի՝ այս օրերին ՄԱԿ-ն ակտիվ ընտրակաշառք է բաժանում հատկապես Սյունիքի մարզի Սիսյանի տարածաշրջանում և Շիրակի մարզում: Առաջարկվող գումարի չափը տատանվում է 2-5 հազարի սահմաններում: Իսկ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի «մեկնարկային գինը» սկսվում է 5-10 հազարից, որոշ ընտրատարածքներում՝ 20000-ից:

- ***5.05.2007 «Հայք», սեփ.լր. «70 հոգով»***

ՀԺԿ նախագահ Ս.Դեմիրճյանի Գյումրիում կայացած հանդիպումն ուղղակի տապալվել է: Հանդիպմանը մասնակցել է ընդամենը 70 մարդ, ընդ որում նրանց մեծամասնությունը եղել են Շիրակի մարզի Արթիկ և Մարալիկ քաղաքի բնակիչներ, որոնց Գյումրի են բերել ավտոբուսներով: Հանրահավաքից առաջ իրավապահները մի քանի օր շարունակ վախեցրել են մարդկանց, որպեսզի չմասնակցեն հանդիպմանը:

- ***10.05.2007 «Փակագիծ» սեփ.լր. «Միջադեպ»***

Մայիսի 9-ին «Ինպինչմենտի» կազմակերպած երթի ժամանակ ԱԱԾ-ի շենքի մոտ տեղի է ունեցել ընդհարում ցուցարարների և ոստիկանության միջև՝ վերջինս ցուցարարների դեմ կիրառել է արցունքաբեր գազ: Ձերբակալվել են մեծ թվով մարդիկ, որոնց հետո բաց են թողել: Երթի մասնակիցները վերջում Ազատության հրապարակում անց են կացրել փոքր հանրահավաք:

- ***10.05.2007 «Հայք» սեփ լր..«Անձնագրահավաք»***

Վարդենիսի հոգեբուժական տուն ինտերնատի տնօրեն, ՀՀԿ Վարդենիսի կառույցի ղեկավար Սամվել Խաչատրյանը իր աշխատակիցներից պահանջել է իրեն տրամադրել ոչ միայն իրենց և ընտանիքների անդամների, այլև հարազատների և հարևանների անձնագրերը: Աշխատակիցներից մեկը ներկայացրել է



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

ընդամենը երեք անձնագիր, ինչը հունից հանել է Խաչատրյանին: Նա սպառնացել է աշխատանքից ազատ արձակել աշխատակցուհուն և պատժել նրա ընտանիքի անդամներին:

- ***10.05.2007 «Փակագիծ» սեփ.լր. «Այրել են ՕԵԿ-ի գրասենյակը»***

Հրկիզվել է թիվ 35 ընտրատարածքում առաջադրված ԱԺ պատգամավորության թեկնածու Ա. Բալասանյանի՝ Գյումրիի Նորավան թաղամասում գտնվող գրասենյակը: Ըստ գրասենյակի ղեկավար Մ.Պետրոսյանի ու նախկին փոխմարզպետի օգնական Ռ. Սանոյանի կատարվածին կարելի է միանշանակ քաղաքական որակում տալ: Գրասենյակը գործել է 3 տարի և երբեք նման գործողություն չի կատարվել:

- ***11.05.2007 «Հայք» սեփ.լր «Ձերբակալել են»***

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում ձերբակալել են նույն քաղաքի բնակչուհի Բ.Մելքոնյանին, որը 4000-ական դրամ ընտրակաշառք է բաժանել «Միկրոշրջան» թաղամասում, ընտրություններին մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից մեկի օգտին քվեարկելու նպատակով: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 154 2 պրիմ հոդվածի 2-րդ կետի համաձայն:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Հավելված 5

## Լոռու մարզում կուսակցությունների հավաքած ձայներն ըստ քաղաքային և գյուղական համայնքների

| N. | Կուսակցության անվանումը | Վանաձոր | | Ալավերդի | | Սպիտակ | | Տաշիր | | Ստեփանավան | | Գյուղական համայնքներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թիվը | % | թիվը | % | թիվը | % | թիվը | % | թիվը | % | թիվը | % |
| 1. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 302 | 0.63 | 43 | 0.5 | 40 | 0.5 | 14 | 0.2 | 31 | 0.7 | 191 | 0.53 |
| 2. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 123 | 0.25 | 11 | 0.1 | 8 | 0.11 | 2 | 0.03 | 3 | 0.07 | 62 | 0.17 |
| 3. | Ազգային միաբանություն | 2167 | 4.5 | 405 | 5.08 | 193 | 2.8 | 34 | 0.6 | 108 | 2.6 | 1047 | 2.95 |
| 4. | Բարգավաճ Հայաստան կուսակցություն | 4272 | 8.9 | 751 | 9.4 | 1169 | 17.2 | 118 | 2.2 | 296 | 7.2 | 2796 | 7.8 |
| 5. | Դաշինք կուսակցություն | 1002 | 2.1 | 165 | 2.07 | 91 | 1.3 | 59 | 1.8 | 211 | 5.09 | 537 | 1.51 |
| 6. | Ժառանգություն կուսակցություն | 3695 | 7.7 | 197 | 2.4 | 185 | 2.7 | 16 | 0.3 | 91 | 2.2 | 549 | 1.54 |
| 7. | Ժողովրդական կուսակցություն | 2425 | 5.1 | 60 | 0.75 | 18 | 0.2 | 7 | 0.13 | 26 | 0.6 | 306 | 0.86 |
| 8. | Ժողովրդավարական ուղի կուսակցություն | 337 | 0.7 | 24 | 0.3 | 23 | 0.3 | 5 | 0.09 | 7 | 0.16 | 83 | 0.23 |
| 9. | Իմպիչմենտ դաշինք | 705 | 1.47 | 174 | 2.1 | 27 | 0.4 | 5 | 0.09 | 38 | 0.91 | 207 | 0.58 |
| 10. | Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն | 6535 | 13.7 | 900 | 11.3 | 622 | 9.1 | 287 | 5.4 | 562 | 13.5 | 4870 | 13.69 |
| 11. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 122 | 0.25 | 10 | 0.12 | 12 | 0.1 | 1 | 0.1 | 6 | 0.14 | 65 | 0.18 |
| 12. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն | 81 | 0.16 | 47 | 0.5 | 9 | 0.1 | 8 | 0.15 | 6 | 0.14 | 49 | 0.13 |
| 13. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 944 | 1.97 | 386 | 4.8 | 70 | 1 | 155 | 2.9 | 55 | 1.3 | 881 | 2.47 |
| 14. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 361 | 0.75 | 83 | 1.04 | 50 | 0.7 | 23 | 0.43 | 20 | 0.4 | 183 | 0.51 |
| 15. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 11040 | 23.08 | 3172 | 39.8 | 3056 | 45 | 4336 | 51.9 | 1936 | 46.7 | 17773 | 49.9 |
| 16. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | ----- | ---- | 26 | 0.32 | 11 | 0.1 | 6 | 0.11 | 3 | 0.07 | 66 | 0.18 |
| 17. | Հանրապետություն կուսակցություն | 648 | 1.35 | 169 | 2.12 | 76 | 1.1 | 20 | 0.37 | 45 | 1.08 | 665 | 1.87 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 4223 | 8.82 | 128 | 1.6 | 449 | 6.6 | 84 | 1.88 | 49 | 1.18 | 1572 | 4.42 |
| 19. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն | 176 | 0.36 | 5 | 0.06 | 15 | 0.2 | 3 | 0.05 | 4 | 0.09 | 40 | 0.11 |
| 21. | Նոր ժամանակներ կուսակցություն | 2406 | 5.03 | 417 | 5.23 | 129 | 1.9 | 53 | 1 | 272 | 6.57 | 956 | 2.68 |
| 22. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 45 | 0.09 | 5 | 0.06 | 1 | 0.01 | 2 | 0.03 | 1 | 0.2 | 24 | 0.06 |
| 23. | Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցություն | 332 | 0.69 | 12 | 0.15 | 11 | 0.16 | 2 | 0.03 | 17 | 0.41 | 60 | 0.16 |
| 24. | Օրինաց երկիր կուսակցություն | 5888 | 12.3 | 774 | 9.7 | 539 | 8 | 52 | 0.9 | 351 | 8.48 | 2568 | 7.22 |
| 25. | **Բոլոր կուսակցությունների հավաքած ձայներն ամբողջ համայնքում** | **47829** | **100 %** | **7964** | **100 %** | **6804** | **100 %** | **5292** | **100 %** | **4138** | **100 %** | **35550** | **100 %** |

Այդուսակի տվյալներից երևում է, որ Վանաձոր քաղաքում, որտեղ 28 ընտրատեղամասերում իրականացվել է դիտորդություն, ՀՀԿ-ն հավաքել է վավեր ձայների 23.08%-ը, մինչդեռ գյուղական բնակավայրերում, որտեղ չի իրականացվել դիտորդություն և կուսակցությունները, բացի ՀՀԿ-ից հնարավորություն չեն ունեցել իրականացնել քարոզչություն և վերահսկել քվեարկության գործընթացը՝ 49.9%-ը: Այսինքն ՀՀԿ-ի ստացած ձայների՝ գյուղական համայնքների տվյալների և մարզկենտրոնից ստացված տվյալների միջև առկա է կրկնակի աստիճանի հասնող տարբերություն: Այս փաստն արդեն իսկ խոսում է դիտորդական առաքելություն իրականացնողների արդյունավետ աշխատանքի մասին, ինչից կարելի է ուղղակի եզրակացնել, որ նրանց աշխատանքներին չխոչընդոտելու դեպքում ստացված թվային տվյալների միջև տարբերությունն ավելին կլիներ: Թերևս, կարելի է գալ այն եզրահանգման, որ կամ գյուղական համայնքներում դիտորդերի բացակայությունը հանգեցրել է զանգվածային ընտրակեղծիքների կամ նրանց աշխատանքին խոչընդոտել են արդեն իսկ «կողմնորոշված» գյուղական համայնքների ղեկավարները, որոնք բնականաբար ազդեցություն են տարածել նաև համայնքների բնակիչների վրա՝ այդ նպատակով օգտագործելով սպառնալիքներ և ճնշումներ:



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Հավելված 6

Վանաձորի «Միգ TV» հեռուստաընկերության կողմից նախընտրական քարոզչության շրջանում՝ 2007թ. ապրիլի 8-ից մայիսի 10-ը Լոռու մարզից մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուներին և համամասնական կարգով առաջադրված կուսակցություններին տրամադրված եթերաժամանակը

| | Ազ ընտրություններում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածու | Տրամադրված եթերաժամանակը րոպեներով |
|---|---|---|
| | Վահրամ Բաղդասարյան | 733 |
| | Վիկտոր Դալլաքյան | 14 |
| | Կարեն Սարիբեկյան | 4 |
| | Սամսոն Խաչատրյան | 0 |
| | Կորյուն Ղարաքեշիշյան | 0 |
| | Լարիսա Փարեմուզյան | 60 |
| | Վահան Մխիթարյան | 3 |
| | Վիկտորյա Հարությունյան | 75 |
| | Վահան Մաղաքյան | 5 |
| | Արկադի Համբարձումյան | |
| | Համամասնական կարգով առաջադրված կուսակցություններ | |
| | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 46 |
| | Ազգային համաձայնություն կուսակցություն | 0 |
| | Ազգային միաբանություն | 4 |
| | Բարգավաճ Հայաստան կուսակցություն | 17 |
| | Դաշինք կուսակցություն | 0 |
| | Ժառանգություն կուսակցություն | 7 |
| | Ժողովրդական կուսակցություն | 4 |
| | Ժողովրդավարական ուղի կուսակցություն | 0.1 |
| | Իմպիչմենտ դաշինք | 0 |
| | Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն | 11 |
| | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի երիտասարդական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 5472 |
| | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 0 |
| | Հանրապետություն կուսակցություն | 195 |
| | Միավորված աշխատանքային կուսակցություն | 91 |
| | Միացյալ ազատական ազգային կուսակցություն | 3 |
| | Նոր ժամանակներ կուսակցություն | 0 |
| | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 0 |
| | Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցություն | 0 |
| | Օրինաց երկիր կուսակցություն | 51 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

Վանաձորի «ՎաԲա» հեռուստաընկերության կողմից նախընտրական քարոզչության շրջանում՝ 2007թ. ապրիլի 8-ից մայիսի 10-ը Լոռու մարզից մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուներին և համամասնական կարգով առաջադրված կուսակցություններին տրամադրված եթերաժամանակը

| | ԱԺ ընտրություններում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածու | Տրամադրված եթերաժամանակը րոպեներով |
|---|---|---|
| | Վահրամ Բաղդասարյան | 535 |
| | Վիկտոր Դալլաքյան | 17 |
| | Կարեն Սարիբեկյան | 0 |
| | Սամսոն Խաչատրյան | 0 |
| | Կորյուն Ղարաքեշիշյան | 0 |
| | Լարիսա Փարեմուզյան | 0 |
| | Արկադի Համբարձումյան | 0 |
| | Վահան Մխիթարյան | 0 |
| | Համամասնական կարգով առաջադրված կուսակցություններ | |
| | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 10 |
| | Ազգային համաձայնություն կուսակցություն | 0 |
| | Ազգային միաբանություն | 0 |
| | Բարգավաճ Հայաստան կուսակցություն | 0 |
| | Դաշինք կուսակցություն | 0 |
| | Ժառանգություն կուսակցություն | 0 |
| | Ժողովրդական կուսակցություն | 0 |
| | Ժողովրդավարական ուղի կուսակցություն | 8 |
| | Իմպիչմենտ դաշինք | 0 |
| | Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն | 0 |
| | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի երիտասարդական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 0 |
| | Հանրապետություն կուսակցություն | 0 |
| | Միավորված աշխատանքային կուսակցություն | 0 |
| | Միացյալ ազատական ազգային կուսակցություն | 0 |
| | Նոր ժամանակներ կուսակցություն | 0 |
| | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 0 |
| | Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցություն | 0 |
| | Օրինաց երկիր կուսակցություն | 22 |



59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am

Վանաձորի «ԼոռիTV» հեռուստաընկերության կողմից նախընտրականք քարոզչության շրջանում՝ 2007թ ապրիլի 8-ից մայիսի 10-ը Լոռու մարզից մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուներին և համամասնական կարգով առաջադրված կուսակցություններին տրամադրված եթերաժամանակը

| | ԱԺ ընտրություններում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածու | Տրամադրված եթերաժամանակը րոպեներով |
|---|---|---|
| | Վահրամ Բաղդասարյան | 822 |
| | Վիկտոր Դալլաքյան | 1138 |
| | Կարեն Սարիբեկյան | 401 |
| | Սամսոն Խաչատրյան | 673 |
| | Կորյուն Ղարաքեշիշյան | 45 |
| | Լարիսա Փարեմուզյան | 8 |
| | Արկադի Համբարձումյան | 45 |
| | Վահան Մխիթարյան | 185 |
| | | |
| | Համամասնական կարգով առաջադրված կուսակցություններ | |
| | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 0 |
| | Ազգային համաձայնություն կուսակցություն | 0 |
| | Ազգային միաբանություն | 68 |
| | Բարգավաճ Հայաստան կուսակցություն | 14 |
| | Դաշինք կուսակցություն | 17 |
| | Ժառանգություն կուսակցություն | 56 |
| | Ժողովրդական կուսակցություն | 11 |
| | Ժողովրդավարական ուղի կուսակցություն | 93 |
| | Իմպիչմենտ դաշինք | 2 |
| | Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն | 24 |
| | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 2 |
| | Հայաստանի երիտասարդական կուսակցություն | 0 |
| | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 19 |
| | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 0.2 |
| | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 151 |
| | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 0 |
| | «Հանրապետություն» կուսակցություն | 10 |
| | Միավորված աշխատանքային կուսակցություն | 0 |
| | Միացյալ ազատական ազգային կուսակցություն | 0 |
| | Նոր ժամանակներ կուսակցություն | 3 |
| | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 0 |
| | Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցություն | 0 |
| | Օրինաց երկիր կուսակցություն | 73 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

**Հավելված 7**

## Վանաձոր քաղաքի ընտրատեղամասերը

*/Նշված տեղամասերում ներկա են եղել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիտորդները/*

| | | ԱԺԿ | ԱՀԿ | ԱՄԿ | ԲՀԿ | ԴԿ | ԺԿ | Ժող. կուս. | Ժուկ | ԻԴ | ՀՅԴ | ՀԴԿ | ՀԵԿ | ՀԺԿ | ՀԿԿ | ՀՀԿ | ՀՄԿ | ՀԿ | ՄԱԿ | ՄԻԱԿ | ՆԺԿ | ՍԴՀԿ | ՔԺՎԿ | ՕԵԿ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 29/01 | 9 | 1 | 17 | 42 | 11 | 57 | 23 | 6 | 5 | 44 | 1 | 0 | 8 | 4 | 86 | 0 | 12 | 43 | 1 | 14 | 1 | 6 | 52 |
| 2 | 29/02 | 3 | 2 | 52 | 84 | 23 | 67 | 56 | 7 | 13 | 114 | 3 | 2 | 16 | 7 | 271 | 1 | 15 | 78 | 5 | 85 | 1 | 4 | 14 |
| 3 | 29/03 | 2 | 0 | 21 | 70 | 16 | 75 | 23 | 2 | 16 | 93 | 4 | 3 | 8 | 20 | 146 | 11 | 16 | 58 | 1 | 33 | 0 | 4 | 65 |
| 4 | 29/04 | 7 | 2 | 28 | 204 | 15 | 52 | 23 | 2 | 14 | 82 | 1 | 2 | 11 | 12 | 151 | 1 | 9 | 75 | 2 | 48 | 4 | 3 | 88 |
| 5 | 29/05 | 6 | 7 | 35 | 86 | 18 | 44 | 42 | 5 | 10 | 158 | 1 | 0 | 7 | 3 | 315 | 1 | 5 | 56 | 1 | 29 | 5 | 5 | 68 |
| 6 | 29/06 | 1 | 0 | 40 | 84 | 20 | 31 | 43 | 4 | 10 | 345 | 1 | 1 | 9 | 1 | 134 | 1 | 2 | 43 | 2 | 36 | 0 | 10 | 77 |
| 7 | 29/07 | 6 | 1 | 45 | 60 | 10 | 36 | 79 | 0 | 6 | 189 | 2 | 0 | 11 | 4 | 309 | 2 | 5 | 41 | 2 | 24 | 2 | 7 | 62 |
| 8 | 29/08 | 4 | 1 | 63 | 102 | 15 | 35 | 36 | 3 | 11 | 132 | 3 | 1 | 22 | 5 | 369 | 1 | 12 | 31 | 7 | 39 | 0 | 8 | 86 |
| 9 | 29/09 | 13 | 0 | 45 | 120 | 14 | 26 | 47 | 2 | 12 | 94 | 2 | 0 | 14 | 6 | 349 | 5 | 10 | 98 | 2 | 56 | 2 | 16 | 74 |
| 10 | 29/10 | 4 | 0 | 28 | 83 | 10 | 39 | 33 | 4 | 8 | 144 | 3 | 4 | 8 | 5 | 175 | 1 | 4 | 70 | 0 | 36 | 3 | 4 | 72 |
| 11 | 29/11 | 8 | 1 | 51 | 75 | 12 | 52 | 73 | 8 | 11 | 99 | 0 | 1 | 22 | 5 | 162 | 1 | 12 | 104 | 2 | 36 | 0 | 2 | 92 |
| 12 | 29/12 | 5 | 1 | 32 | 92 | 15 | 81 | 33 | 1 | 10 | 119 | 0 | 1 | 18 | 8 | 144 | 3 | 13 | 61 | 7 | 45 | 0 | 13 | 82 |
| 13 | 29/13 | 4 | 0 | 12 | 65 | 4 | 46 | 20 | 0 | 5 | 92 | 0 | 1 | 4 | 5 | 759 | 1 | 15 | 74 | 1 | 19 | 0 | 1 | 35 |
| 14 | 29/14 | 6 | 2 | 33 | 119 | 10 | 65 | 55 | 0 | 8 | 64 | 1 | 1 | 13 | 2 | 169 | 1 | 12 | 65 | 1 | 18 | 0 | 25 | 10 |
| 15 | 29/15 | 3 | 0 | 22 | 90 | 9 | 52 | 36 | 6 | 6 | 62 | 1 | 0 | 12 | 1 | 131 | 0 | 5 | 93 | 4 | 28 | 2 | 9 | 74 |
| 16 | 29/16 | 3 | 1 | 23 | 149 | 18 | 33 | 40 | 5 | 9 | 67 | 2 | 1 | 6 | 10 | 155 | 0 | 8 | 42 | 1 | 27 | 1 | 16 | 93 |
| 17 | 30/01 | 8 | 7 | 51 | 90 | 29 | 43 | 83 | 4 | 7 | 91 | 4 | 2 | 10 | 2 | 221 | 3 | 18 | 72 | 3 | 29 | 0 | 0 | 14 |
| 18 | 30/02 | 23 | 2 | 47 | 76 | 32 | 40 | 45 | 5 | 13 | 99 | 1 | 0 | 27 | 7 | 142 | 1 | 10 | 172 | 19 | 39 | 1 | 10 | 17 |
| 19 | 30/3 | 4 | 4 | 47 | 44 | 15 | 42 | 39 | 5 | 13 | 211 | 2 | 2 | 19 | 9 | 144 | 4 | 10 | 113 | 0 | 18 | 1 | 13 | 11 |
| 20 | 30/04 | 5 | 2 | 44 | 53 | 31 | 38 | 28 | 2 | 12 | 257 | 1 | 0 | 6 | 8 | 124 | 4 | 9 | 84 | 1 | 24 | 1 | 7 | 10 |
| 21 | 30/05 | 3 | 4 | 31 | 51 | 15 | 43 | 19 | 2 | 25 | 337 | 3 | 2 | 13 | 6 | 139 | 1 | 9 | 96 | 0 | 45 | 0 | 3 | 14 |
| 22 | 30/06 | 9 | 4 | 37 | 65 | 21 | 72 | 46 | 6 | 14 | 126 | 6 | 3 | 15 | 5 | 205 | 1 | 14 | 103 | 2 | 42 | 0 | 3 | 18 |
| 23 | 30/07 | 3 | 1 | 30 | 71 | 11 | 64 | 28 | 4 | 15 | 47 | 2 | 2 | 12 | 6 | 164 | 2 | 6 | 112 | 5 | 38 | 3 | 4 | 87 |
| 24 | 30/08 | 9 | 6 | 34 | 58 | 9 | 102 | 58 | 5 | 13 | 74 | 4 | 0 | 30 | 6 | 142 | 0 | 9 | 66 | 3 | 45 | 1 | 9 | 24 |
| 25 | 30/09 | 1 | 1 | 28 | 38 | 16 | 69 | 37 | 4 | 6 | 24 | 1 | 2 | 8 | 4 | 127 | 0 | 7 | 57 | 4 | 16 | 0 | 5 | 73 |
| 26 | 30/10 | 6 | 1 | 48 | 67 | 18 | 68 | 55 | 8 | 5 | 68 | 1 | 2 | 21 | 7 | 168 | 2 | 6 | 41 | 1 | 47 | 1 | 5 | 12 |
| 27 | 30/11 | 3 | 2 | 36 | 82 | 12 | 85 | 48 | 6 | 12 | 72 | 3 | 0 | 13 | 11 | 244 | 2 | 9 | 70 | 4 | 61 | 0 | 2 | 12 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 30/12 | 9 | 3 | 41 | 67 | 16 | 87 | 52 | 7 | 10 | 60 | 0 | 1 | 11 | 4 | 214 | 1 | 10 | 68 | 2 | 62 | 2 | 2 | 10 |
| 29 | 30/13 | 9 | 1 | 49 | 114 | 29 | 87 | 59 | 15 | 16 | 135 | 0 | 1 | 20 | 6 | 156 | 1 | 6 | 80 | 5 | 49 | 0 | 5 | 13 |
| 30 | 30/14 | 7 | 1 | 30 | 39 | 42 | 52 | 45 | 3 | 6 | 115 | 4 | 1 | 14 | 4 | 143 | 3 | 5 | 94 | 4 | 16 | 1 | 5 | 49 |
| 31 | 30/15 | 5 | 1 | 23 | 56 | 12 | 51 | 27 | 7 | 12 | 72 | 2 | 0 | 7 | 5 | 112 | 0 | 3 | 55 | 4 | 31 | 0 | 2 | 63 |
| 32 | 30/16 | 5 | 4 | 43 | 60 | 14 | 67 | 61 | 8 | 24 | 212 | 1 | 1 | 19 | 8 | 135 | 2 | 13 | 151 | 5 | 54 | 1 | 5 | 11 |
| 33 | 30/17 | 1 | 1 | 50 | 129 | 6 | 115 | 57 | 4 | 12 | 118 | 4 | 2 | 10 | 7 | 183 | 3 | 17 | 87 | 2 | 38 | 0 | 8 | 61 |
| 34 | 30/18 | 7 | 2 | 32 | 65 | 14 | 54 | 47 | 5 | 16 | 121 | 1 | 2 | 19 | 4 | 128 | 3 | 5 | 56 | 6 | 49 | 1 | 4 | 75 |
| 35 | 30/19 | 7 | 4 | 42 | 119 | 22 | 90 | 32 | 7 | 16 | 117 | 2 | 1 | 14 | 7 | 263 | 1 | 6 | 58 | 7 | 43 | 0 | 7 | 74 |
| 36 | 30/20/ | 11 | 5 | 64 | 81 | 25 | 77 | 42 | 8 | 16 | 146 | 4 | 7 | 25 | 6 | 174 | 1 | 16 | 81 | 2 | 41 | 1 | 4 | 13 |
| 37 | 30/21 | 4 | 7 | 46 | 84 | 18 | 79 | 43 | 5 | 38 | 142 | 2 | 2 | 52 | 7 | 240 | 0 | 25 | 64 | 7 | 76 | 0 | 6 | 11 |
| 38 | 30/22 | 6 | 5 | 34 | 174 | 19 | 91 | 36 | 2 | 15 | 118 | 4 | 0 | 18 | 5 | 185 | 2 | 14 | 87 | 3 | 48 | 3 | 2 | 99 |
| 39 | 30/23 | 8 | 4 | 53 | 87 | 17 | 141 | 40 | 10 | 28 | 95 | 10 | 2 | 33 | 12 | 264 | 2 | 22 | 42 | 0 | 72 | 0 | 1 | 10 |
| 40 | 30/24 | 3 | 4 | 38 | 61 | 15 | 97 | 35 | 9 | 7 | 120 | 2 | 1 | 30 | 3 | 248 | 2 | 15 | 58 | 3 | 61 | 0 | 5 | 88 |
| 41 | 30/25 | 6 | 1 | 27 | 67 | 41 | 80 | 40 | 41 | 14 | 407 | 2 | 1 | 14 | 5 | 177 | 1 | 21 | 53 | 4 | 48 | 2 | 2 | 11 |
| 42 | 30/26 | 4 | 3 | 40 | 99 | 19 | 138 | 59 | 6 | 27 | 134 | 3 | 1 | 25 | 17 | 300 | 3 | 18 | 61 | 2 | 96 | 3 | 18 | 61 |
| 43 | 30/27 | 1 | 1 | 34 | 69 | 38 | 123 | 25 | 11 | 21 | 89 | 1 | 3 | 22 | 7 | 237 | 1 | 23 | 76 | 3 | 51 | 0 | 9 | 13 |
| 44 | 30/28 | 7 | 3 | 55 | 79 | 29 | 110 | 52 | 5 | 16 | 121 | 2 | 1 | 24 | 7 | 267 | 1 | 28 | 46 | 4 | 53 | 0 | 3 | 13 |
| 45 | 30/29 | 8 | 3 | 43 | 50 | 26 | 103 | 48 | 13 | 13 | 79 | 2 | 1 | 30 | 8 | 253 | 3 | 17 | 62 | 6 | 77 | 1 | 4 | 13 |
| 46 | 30/30 | 4 | 3 | 44 | 80 | 20 | 89 | 59 | 9 | 14 | 115 | 5 | 4 | 35 | 3 | 175 | 1 | 24 | 61 | 3 | 103 | 0 | 10 | 11 |
| 47 | 30/31 | 9 | 2 | 55 | 77 | 15 | 103 | 51 | 12 | 10 | 92 | 1 | 2 | 28 | 11 | 192 | 3 | 19 | 116 | 4 | 76 | 1 | 7 | 75 |
| 48 | 30/32 | 6 | 3 | 65 | 61 | 26 | 65 | 34 | 5 | 11 | 79 | 4 | 3 | 5 | 9 | 148 | 1 | 17 | 52 | 3 | 74 | 0 | 6 | 89 |
| 49 | 30/33 | 7 | 2 | 61 | 64 | 18 | 64 | 59 | 6 | 15 | 89 | 3 | 1 | 16 | 8 | 146 | 2 | 12 | 88 | 3 | 51 | 0 | 13 | 10 |
| 50 | 31/01 | 4 | 1 | 39 | 43 | 28 | 56 | 49 | 6 | 11 | 96 | 2 | 0 | 21 | 4 | 145 | 2 | 10 | 46 | 0 | 52 | 0 | 3 | 13 |
| 51 | 31/02 | 4 | 3 | 41 | 45 | 20 | 34 | 41 | 4 | 7 | 42 | 1 | 1 | 14 | 3 | 126 | 0 | 5 | 112 | 2 | 29 | 2 | 4 | 98 |
| 52 | 31/03 | 3 | 0 | 38 | 48 | 15 | 45 | 49 | 7 | 5 | 105 | 2 | 2 | 11 | 3 | 104 | 3 | 6 | 92 | 3 | 39 | 0 | 0 | 11 |
| 53 | 31/04 | 4 | 1 | 21 | 24 | 4 | 27 | 17 | 7 | 6 | 35 | 1 | 2 | 11 | 8 | 91 | 1 | 8 | 86 | 1 | 32 | 0 | 3 | 11 |
| 54 | 31/05 | 1 | 1 | 20 | 25 | 12 | 21 | 16 | 4 | 8 | 55 | 1 | 1 | 17 | 4 | 71 | 3 | 3 | 107 | 1 | 15 | 0 | 3 | 62 |
| 55 | 31/06 | 4 | 0 | 40 | 53 | 17 | 56 | 36 | 6 | 7 | 94 | 3 | 2 | 23 | 7 | 222 | 3 | 12 | 61 | 4 | 32 | 0 | 5 | 16 |
| 56 | 31/07 | 7 | 3 | 40 | 77 | 19 | 72 | 68 | 5 | 18 | 45 | 1 | 0 | 13 | 14 | 296 | 2 | 21 | 109 | 6 | 22 | 0 | 11 | 14 |
| 57 | 31/08 | 3 | 1 | 30 | 51 | 6 | 46 | 51 | 4 | 13 | 82 | 2 | 1 | 12 | 5 | 215 | 1 | 8 | 61 | 1 | 19 | 0 | 3 | 15 |
| 58 | 31/09 | 2 | 0 | 17 | 18 | 4 | 40 | 19 | 3 | 1 | 50 | 1 | 2 | 13 | 2 | 152 | 0 | 3 | 55 | 1 | 19 | 0 | 0 | 57 |



*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am, website:www.hcav.am*